281·6

ՏԱՐԻԼՕՐՔ

ՅՈՒՆՈՒԱՐ

1994

ԾԱ

ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԹԵՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1994

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

18209-ԱԱԳ
72-95



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ողորմածությամբն Ամենակալն Աստուծո և բարեհաճ կարգադրությամբ ազգիս Վեհափառ և Սրբազնագույն Կաթողիկոս Վազգեն Ա-ի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին»-ը օժտվեց խմբագրական նոր աշխատակազմով:

Քանի որ վերջին տարիներին վերացել են նախորդ շրջանի գաղափարական սահմանափակումներն, ու հոգևոր-կրոնական հարցերի առջև որևէ արգելք չկա, այսուհետև անհրաժեշտ է «Էջմիածին» ամսագրին հաղորդել եկեղեցա-աստվածաբանական ուղղություն, իսկ պատմա-բանասիրական հոդվածներից զետեղել միայն այնպիսիք, որոնք կապվում են մեր եկեղեցական պատմության կամ մեկնողական-դավանաբանական գրականության հետ:

Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի բուն առաքելությունն է՝ սովորեցնել հայ հավատացյալին ի՛ր դավանությունը, ի՛ր Եկեղեցու արարողությունները ու կանոնները, տպագրվող հոդվածներով սերմանել ընտանեկան աստվածատուր արքությունները պահպանելու ոգին:

Ամսագիրը հարկավոր է, որ ունենա գիտական խորք, արտացոլի Մայր Աթոռի գործունեությունը, ինչպես նաև նպաստի ժամանակակից ազգային-հոգևոր մտքի զարգացմանը: Իր նախորդի՝ «Արարատ»-ի նման, «Էջմիածին»-ը նույնպես նախ և առաջ պետք է կազմվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների հեղինակած գործերով: Նպատակահարմար ենք գտնում նյութերի զետեղման մոտավոր այսպիսի կարգ.

Ա Բաժին—Պաշտոնականք

ա. Ամեն համար բացվելու է խմբագրականով, որի նպատակն է լինելու՝ ընդհանրացված գծերով ներկայացնել հոգևոր-եկեղեցական կյանքի այժմեական խնդիրները.

բ. Հայրապետական, պաշտոնական հրապարակումներ:

գ. Եկեղեցական բեմ. լուրեր: Նպատակն է՝ վեր հանել Մայր Աթոռի միաբանական գործունեությունը.

դ. Թեմական կյանք: Ներկայացնել ներքին և արտաքին թեմերի կրոնական համապարփակ գործունեությունը.

ե. Միջեկեղեցական կյանք և էկումենիկ շարժում.

Բ Բաժին—կրոնական, եկեղեցական և աստվածաբանական նյութեր

ա. Քրիստոնեական վարդապետության հիմունքները.

բ. Հայ Եկեղեցու դավանաբանական ժառանգությունը.

գ. Հայ Եկեղեցու պատմության և եկեղեցական մատենագրության լուսաբանում.

դ. Դեպի քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակը.

ե. Անցյալի լուսավոր էջերից—նախորդ շրջանի մեր հոգևորականների գործերի առավել խտացված և ոգեղեն հատվածների ներկայացումը մերօրյա ընթերցողին.

զ. Հոգևոր-կրոնականը մեր դասական մատենագիրների գործերում վեր հանող նյութեր և հայոց պատմիչների եկեղեցական այն աշխատանքների լուսաբանումը, որոնք նվազ հայտնի են կամ գրեթե ներկայացված չեն.

է. Պատմա-բանասիրական այնպիսի հոդվածներ, որոնք կապվում են եկեղեցական պատմության հետ.

ը. Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանական և դավանաբանական հիմքերին նվիրված հոդվածներ:

թ. Պարբերաբար ներկայացնել այսօրվա ընթերցողին ոչ այնքան հայտնի այն տաղերը և ներբողները, որոնք սփռված են մեր ձեռագրերի էջերում և նվիրված են Էջմիածնին և որոնցում շեշտվում է Մայր Աթոռի՝ որպես Հայոց հոգևոր կենտրոնի գաղափարը.

ժ. Գրքերի տեսություն: Հայաստանում և Սփյուռքում լույս տեսած հոգևոր-մշակութային արժեքավոր գործերի գրախոսություններ:

«Էջմիածին» ամսագրի նոր աշխատակազմը իր ուժերի ներածին չափով լավագույնս կանի Հայ Եկեղեցու հավատքի տարածմանը և կնպաստի հայ ժողովրդի զավակներին կրոնական-բարոյական սրբազան դաստիարակությամբ Աստծու արժանի ժառանգորդներ դարձնելու գործում:



ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ

Այսօր ոօն է սուրբ ծննդեան, աւետիս:
Տեառն մերոյ եւ Յայտնութեան, աւետիս:

Այսօր արեւն արդարութեան. աւետիս:
Երեւեցաւ ի մէջ մարդկանն. աւետիս:

Այսօր Սուրբ Կոյսն անապական. աւետիս:
Ծնաւ երեր զանմահ արքայն. աւետիս:

Այսօր հրեշտակք յերկնից իջան. աւետիս:
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն. աւետիս:
Այսօր դժոխքն սարսեցան. աւետիս:
Գունդք դիւաց յոյժ տրտմեցան. աւետիս:
Այսօր չարքն կարկեցան. աւետիս:
Եւ աղաւնեաւքն ուրախացան. աւետիս:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (1994 թ. Յունուարի 6)

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Սիրելի հաւատացեալներ,

Նոր Տարուայ այս լոյս առաւօտեան, Մենք՝ Հայրապետը ձեր, անհուն բերկրանքով բերում ենք ձեզ բոլորիդ մեծ աւետիսը աշխարհի Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշալի Ծննդեան:

Բազում դարեր շարունակ, ամէն Նոր տարուայ լուսաբացին մարդկային աշխարհը լսում է երկու հազար տարի առաջ Բեթղեհէմի երկնքից իջնող հրեշտակների ձայնը՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Թէև ահա երկու հազար տարիներ եկել ու անցել են այդ անկրկնելի օրերից, սակայն մեծ յոյսը հոգիների փրկութեան և հոյակապ տեսիլքը մի խաղաղ ու երջանիկ աշխարհի, այսօր էլ բոլոր մարդկային սրտերին խօսում են այնպէս քաղցր, այնպէս թարմ ու այնպէս այժմէական, որ կարծէք նոր, մեր օրերին է բացուել երկինքը, հէնց մե՛զ համար, մեր յոգնած ու ծարաւի հոգիներին բերելու պատգամներն այդ փրկարար, տեսիլքներն այդ երազ: Ահա թէ ինչու յոյժ երջանիկ ենք ձեզ տալու աւետիսը աւետիսների, բարի լուրը Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան:

Եւ ինչքան խորհրդանշական է ու իմաստալից, որ Քրիստոսի Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը աւետում է աշխարհին համայն, նոր տարուայ սեմին, ժամանակի մի նոր լուսաբացին, երբ իրար են հանդիպում անցեալն ու գալիքը: Անցեալն իր հետ բերած բոլոր իրագործումներով, նուաճումներով ու զարգացումներով, բայց աւա՜ղ նաև՝ իր դառնութիւններով, յուսախաբութիւններով ու մեղանչումներով:

Կանգնած այսօր նոր տարուայ սեմին, Մենք ողջունում ենք և օրհնում անցեալի լաւն ու բարին, բայց և տխրում ու ցաւում նոյն անցեալի՝ աշխարհին բերած չարիքների և ողբերգութիւնների համար:

Կանգնած այսօր նոր տարուայ սեմին, մեր բոլորի յուսացեալ հոգիները, վերստին զօրացած ու ներշնչուած Սուրբ Ծննդեան շնորհներով ու երկնառաք պատգամներով, վերանորոգում են իրենց ուխտը երկնքի հետ,

այն պայծառ հաւատքով, թէ ճշմարիտ աղբիւրը բարեաց, ճշմարիտ ճանապարհը սիրոյ և խաղաղութեան, ճշմարիտ գրաւականը մարդկանց ու ազգութիւնների երջանիկ համակեցութեան, սկիզբ է առնում այն գերագոյն գիտակցութիւնից, թէ բոլոր մարդիկ անխտիր եղբայրներ են հարազատ, իբրև զաւակները միևնոյն Արարիչ Հօր՝ Աստուծոյ:

Աղօթենք և ամէն մէկս մեր միջոցներով, մեր դիրքերից գործենք անյոգնաբեկ վճռական եռանդով, որ գալիքը չվարակուի անցեալի մեղքերով, անցեալի խարխափումներով, որ արմատախիլ արուեն բոլոր տեսակի աղտեղութիւնները, որոնք թունաւորում են հոգիները մարդկանց, տունաւորում յարաբերութիւնները միջազգային: Այդպիսի չարիքներ են մեր օրերին, մանաւանդ ազգամիջեան ատելութիւնները, ընկերային անարդարութիւնները, ազգայնական եսամոլութիւններն ու ցեղապաշտական խտրականութիւնները, անսանձ սպառազինութիւններն ու ոմանց՝ արիւն թափելու հիւանդագին հոգեվիճակը, որ երբեմն անհաւատալի չափերով զարգանում է աշխարհի տարբեր շրջաններում, անմեղ մարդկանց կեանքը խլող անխբեկչական անմարդկային արարքներով: Կարելի չէ հաշտուել նման չարիքների, նման ողբերգութիւնների հետ:

Հայ ժողովրդի անցեալ դարերի ողբերգական փորձը առաւել հրամայական է դարձնում մեզ համար ազգութիւնների համերաշխութիւնը, ազատութեան և ազգային ինքնորոշման սկզբունքների հիման վրայ: Ինչպէս կարող ենք մոռացութեան տալ անլուր ողբերգութիւնները, որոնք բարեպաշտ, աշխատասէր հայ ժողովրդի կեանքի բաժինը եղան դարեր շարունակ և մանաւանդ 1915-ի և 1916-ի սև տարիներին՝ իբրև հետևանք կայսերապաշտական եսամոլ շահերի և անխիղճ բռնակալների քաղաքականութեան, որը շարունակուեց նաև մեր օրերին յատկապէս Լեռնային Ղարաբաղի մեր քոյրերի ու եղբայրների նկատմամբ, որոնք մարտնչում են ցայսօր անարդարութեան դէմ, և շատերը նրանցից նախընտրում են ազատ մեռնել, քան ստրուկ ապրել:

Տէր Աստուած ամենակարող, օգնութեան հասիր մեր աշխարհին, աւելի լոյս տուր մարդկանց մտքերին և աւելի խաղաղութիւն նրանց հոգիներին, բոլորիս անխտիր: Եւ թող աշխարհի բոլոր մարդասէր ու յառաջդիմատենչ մարդիկ ու ժողովուրդներ, մէկտեղեն իրենց գաղափարական-բարոյական բոլոր զէնքերը, բոլոր ճնարաւորութիւնները, և անխորտակելի պատնէշ կանգնեցնեն՝ ի պաշտպանութիւն արդարութեան, ազատութեան և խաղաղութեան իդէալների, որոնք մեզ՝ քրիստոնեաներիս համար հանդիսանում են կրօնական հաւատքի և աւետարանական սիրոյ պատգամից ճառագայթող՝ ապրելու և գործելու հրամայականներ:

Մեր օրերի խռովահույզ այս աշխարհում, մեր մայր երկիրը՝ մեր նորահրոշակ անկախ հանրապետութիւնը ևս գտնւում է տագնապալի վիճակում:

Մենք և մեր Եկեղեցու բոլոր նուիրեալ սպասաւորները Մեր սեպուհ պարտքն ենք համարում միշտ կողքին մնալ մեր ժողովրդի և միշտ նեցուկ՝ մեր անկախ երկրի մնայուն ու տևական շահերին, և միշտ աղօթող ու անձանձրոյթ գործող՝ ի խնդիր խաղաղութեան ու ազգութիւնների համերաշխութեան դատի վերջնական յաղթանակի, որը հանդիսանալու է նաև յաղթանակը Արցախեան արդար դատի:

Սիրեցեալ հոգևոր զաւակներ Մեր.

Կանգնած այսօր, Նոր տարուայ սեմին, շնորհաւորում ենք ձեզ բոլորիդ և մաղթում, որ լոյս շնորհներով Քրիստոսի Սուրբ Ծննդեան, լոյսով

լցուի ձեր կեանքն ու հոգին ամբողջ, և դուք դառնաք լուսոյ որդիներ, միշտ պատրաստ նուիրուելու շինարար աշխատանքի, բարի գործի, եկեղեցաշէն ու հայրենանուէր առաքելութեան: Դուք բոլորդ, որ ի Հայաստան, որ յԱրցախ և ի սփիւռս աշխարհի, ողջ մնացէք ու քաջառողջ, միշտ զօրացեալ Սուրբ Հոգւով, միշտ ամուր կանգնած ձեր նախնեաց հաւատքի վէմի վրայ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ. ամէն:

Շնորհաւոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆԻՔ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ
(Ս. Էջմիածին, 31 դեկտեմբեր 1993 թ.)

Աստվածային տիեզերական տնօրինությամբ, մեր երկրագունդը մեկ անգամ ևս մի պտույտ կատարեց արեգակի շուրջը: Բացվեցին դռները Նոր տարվա, 1994 թվականի:

Այս պահը հանդիսավոր է և խորհրդավոր: Բոլոր ժամանակներում, մարդիկ դիմավորել են Նոր տարին ուրախությամբ, նոր հույսերով, նոր երազանքներով, նոր աղոթքներով:

Մենք կուզենայինք այս Նոր տարին դիմավորել ձեզ հետ մեր Տերունական աղոթքով՝

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն:

Այո՛, փրկյա՛ մեզ, Տեր, ի չարեն և մի՛ տանիր զմեզ ի փորձություն:

Հատկապես մեր ժամանակներում, երբ ողջ մեր ժողովուրդը, որ ի Հայաստան և ի Արցախ, ապրում են դժվարին օրեր և տագնապալի պահեր, այո՛, մենք բոլորս աղոթում ենք, որ Աստված մեր ազգը հեռու պահի ամեն տեսակ փորձություններից և չարի որոգայթներից, փորձություններ ու չարի որոգայթներ, որոնք շրջապատած են մեզ և սպառնում են մեր ազգային կյանքի գոյատևմանն ու խաղաղությանը, մանավանդ Հայոց չքնաղ աշխարհ Արցախում:

Հարազատնե՛ր մեր, այս պահին կուզենայինք լինել ձեզանից ամեն մեկի կողքին ու լսել ձեր վիրավոր սրտերի տրոփյունը, ձեր մորմոքը, ձեր

աղերսը, կուզենայինք լսել ձեր զրկանքների և այս ծանր ձմռան գիշերներին՝ ձեր դժվարությունների մասին, մեր պարտքը համարելով մեղմացնել ձեր դժվարությունները, ոգեշնչել ձեզ նոր հույսերով, նոր հեռանկարներով:

Մի՛ երկնչիք, մի՛ վհատվեք, մնացե՛ք հավատարիմ մեր սուրբ հավատքին, մեր Առաքելական Մայր Եկեղեցուն, նեցո՛ւկ կանգնեցեք միասնաբար ու համերաշխ՝ մեր անկախ պետականության, և նույնիսկ ամենածանր կացությանց մեջ, ձեր ճակատները պահեցե՛ք բարձր ու միշտ հպարտ:

Նոր տարին, այո՛, մեզ բերում է հույսը նոր ապագայի, նոր նվաճումների, նոր հաղթանակների:

«Բա՛ց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան Քո և ցո՛յց մեզ զճանապարհս Քո արդարութեան և խաղաղութեան»:

Սիրելինե՛ր մեր, շնորհավորում ենք ձեր Նոր տարին. «ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»: Ամեն:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն ԱԼԵՔՍԵՅ Բ-ԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պապ և Պատրիարք, Նորին Սրբություն ՊԱՐԹԵՆԻՈՍ Գ-ԻՆ (Կահիրե),
Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Վպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն ԱԲԲԱ ՄԵՐԿՈՐԻՈՍԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱԹՏԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն **ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա ԻՎԱՍԻՆ** (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն **ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ** (Դամասկոս),

Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն **ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ** (Բեյրութ),

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն **ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ** (Դամասկոս),

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **ՋՈՐՋ ԿԱՐԵՅԻՆ** (Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն **ՍԵՐԱՖԻՄԻՆ** (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն **ԳԵՐՄԱՆԻՆ** (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **ՎԱՍԻԼԻԻՆ** (Վարշավա),

Պրահայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն **ԴՈՐՈՖԵՅԻՆ** (Պրահա),

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն **ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ** (Նիկոզիա),

Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն **ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ** (Բքերքե),

Միաբարյան ուխտի ընդհանուր Աթոռակալ Հայր **ԳԵՈՐԳ** վարդապետ **ՊԱԼՅԱՆԻՆ** (Վենետիկ),

Միաբարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր **ՊՕՂՈՍ** վարդապետ **ԳՈՃԱՆՅԱՆԻՆ** (Վիեննա),

Ձերդ Սրբություն,

Աստուծո ողորմությամբ Մենք գոհունակությունն ունենք այս տարի ևս ուրախությամբ և ցնծությամբ տոնելու հրաշափառ ծնունդը մեր փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի, և հրեշտակների հետ նորից երգելու աքանչելի փառաբանությունը՝ «Փա՜ռք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Ահա այս ուրախությամբ և ցնծությամբ ներկայացնում ենք Ձերդ Սրբությանը մեր սրտագին շնորհավորանքը՝ աղոթքով ջերմագին, որ Տերը իր խաղաղությունն ու աստվածային շնորհները առատապես բաշխի Ձեր վրա ու պարգևի Ձեզ արևշատ բեղմնավոր տարիներ՝ քաջառողջությամբ և երջանկությամբ:

Թող Բեթղեհեմի լույսն ու ուրախությունը ուղեկցեն Ձերդ Սրբությանը և գորացնեն Ձեզ Ձեր սրբազան առաքելության ճանապարհին ի փառս և ի ծաղկումն ձեր մեծ և սուրբ Եկեղեցու:

Թող նոր տարին լինի նաև համագործակցության և եղբայրության արդյունավետ մի տարի քրիստոնեական բոլոր Եկեղեցիների միջև:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ս. Էջմիածին

* * *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»

Այսօր Մեր ջերմագին աղոթքն է, որ Փրկչին մեր Հիսուսի հրաշալի ծննդյան շնորհներով, Նոր տարին իր հետ բերի համայն աշխարհին խաղաղություն և ի մարդիկ հաճություն:

Մեր սրտագին աղոթքն է մանավանդ, որ Սուրբ Ծննդյան այս կենսրար պատգամները կյանքի բաժինը դառնան նաև Մեր հավատավոր ժողովուրդին ի Հայաստան, ՀԱրցախ և ի սփյուռս աշխարհի:

Սույն խոհերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձերդ Սրբության, սուրբ Աթոռիդ ուխտապահ միաբանության և համայն Ձեր բարեպաշտ ժողովրդյան, Մեր հայրական սիրո ողջույնը և օրհնությունը՝ մաղթելով բոլորին հոգվո և մարմնո քաջառողջ խաղաղ կյանք, ընտանեկան երջանկությամբ, առաքինի ու բարի գործոց հաջողությամբ:

Թող մարդասերն Աստված պահապան ու օգնական մնա միշտ մեր Սուրբ Եկեղեցվույն և ազգիս համայն, հիրականացում նրա արդար ապասումներին:

Եղբայրական սիրով և ջերմագին բարի մաղթանքներով՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

Чудотворная икона Божией Матери Бесприданница, XX век. Церковь Знамения Божией Матери в Дубровицах, XX век. Церковь Рождества Христова в Старом Симонове, XX век. Церковь Воскресения Христова в Сокольниках, XX век. Церковь Всех Святых на Соколе (6 декабря 1994 г.)



ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Նախագահ,

Հարգալից զգացումներով Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ մեր ջերմագին բարի մաղթանքները Նոր տարվո առթիվ՝ մաղթելով Ձեզ մշտանորոգ հայրենանվեր կորով ու ներշնչանք՝ շարունակելու Ձեր առաքելությունը Ձեզ հատուկ իմաստությամբ՝ հաղթահարելու մեր հայրենիքի առաջ ծառացած ծանր դժվարությունները և առաջնորդել մեր երկիրը դեպի խաղաղություն և բարօրություն:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգվով:

ՎԱՉԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՎԱՐՉԱՊԵՏ
ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Վարչապետ,

Գոհությունն Աստուծո, որ Նոր տարվո լուսաբացին առիթն ունենք Ձեզ հղելու Մեր բարի մաղթանքները քաջառողջության և անսպառ եռանդի՝ Ձեր հայրենանվեր առաքելության ճանապարհի վրա: Թող Տերը Ձեզ մշտապես զորացնի, որպեսզի կարողանաք հաղթահարել այն բազում դժվարությունները, որոնք ծառացած են Ձեր և Մեր հայրենի կառավարության առաջ:

Նոր տարին թող իր հետ բերի մեր ժողովուրդին բարօրություն և խաղաղություն:

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ
ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Երևան

Հարգարժան Տիար Խաչատրյան,

Ահա Նոր տարին, 1994 թվականը, որ հուսով ենք, թե մեր ժողովրդին պիտի բերի լուսաբացը դժվարությունների հաղթահարման և ըղձալի բարօրություն և խաղաղություն մեր անկախ Մայր Հայրենիքի:

Աղոթում ենք նաև Ձեր արևշատության և ընտանեկան երջանկության համար:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին շնորհավորանքի հեռագրեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՊԱՆՆԵՐԻՆ

(6 հունվար 1994 թ.)

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ:

Ուրախությամբ կողջունենք ավետիսը Քրիստոսի ծննդյան և պատգամը երկնքի հրեշտակների՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Կարծում ենք, որ ավելի քան երբեք մեր օրերի մարդկությունը, ժողովուրդները կարիք ունեն լսելու և կյանքի կոչելու այս պատգամները:

Եվ հատկապես մեր ժողովուրդը, հայ ժողովուրդը կարիք ունի խաղաղության և փոխադարձ հաճության իր զավակների միջև: Մենք մնում ենք միշտ աղոթող խաղաղության հաստատման ի Հայաստան և ՀԱրցախ:

Այս խոհերով շնորհավորում ենք այստեղ ներկայությունը մեր Հանրապետության հարգարժան նախագահի և մեր պետական իշխանությանց ներկայացուցիչների, ցանկանալով նրանց լիակատար հաջողություններ իրենց հայրենաշեն առաքելության ճանապարհին 1994-ի ընթացքին:

Խորին հարգանքով ողջունում ենք նաև բարեկամ պետությանց հարգարժան դեսպաններին, որոնք բարի եղան պատասխանելու մեր հրավերին և ներկա լինելու Մայր տաճարի սրբազան արարողություններին, Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնախմբության առթիվ:

Շնորհակալություն բոլորին: Նաև Մեր աղոթքն է, որ Տերը մեր բարեկամ պետությանց և ժողովուրդներին պարգևի իր կենարար շնորհները խաղաղության և բարգավաճման:

Ձեզ և մեզ մեծ ավետիս՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:





ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1993 թ. դեկտեմբերի 31-ն է: Մի քանի ժամից կհնչի այս տարվա ավարտն ազդարարող վերջին զանգը: Մարդկության պատմությունը կթևակոխի նոր տարեշրջան՝ բազում անհայտներով և սպասումներով, հույսերով, ակնկալիքներով: Այսպիսի խորհրդածություններով Մայր Աթոռիս միաբանությունը և ուսանողությունը, միախմբված Վեհափառ Հայրապետի օրհնության ներքո, հավաքվել էր հրաժեշտ տալու անցնող տարվան և նոր իղձերով ու եռանդով դիմավորելու նոր տարին: Հիրավի այս խանդավառությամբ միասնաբար առ Աստված հղված Տերունական աղոթքից հետո հնչում են Հայաստանի Հանրապետության Օրհներգը և հոգևոր ճեմարանի քայլերգը, որից հետո Դ լսարանի սան Գեղամ Մարտիրոսյանը Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագրքից ընտրված աղոթքով, Նարեկի Սուրբի միջոցով աղոթում է Բարձրյալին Երկրիս խաղաղության և անսասանության համար՝ մի պահ ներկաներին հաղորդակից դարձնելով համամարդկային ցավերով ապրող Եռամեծար ճգնակյացի տվայտանքներին:

Այնուհետև հանդիսավոր երեկոյի բացման ու շնորհավորանքի խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը.

«Վեհափառ Տեր,
Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,
Սիրելի սաներ,

Խորհրդավոր պահ է այժմ մեզ բոլորիս համար: Հավաքվել ենք մեկտեղ՝ ավանդաբար հրաժեշտ տալու անցնող տարուն և սպասումով ու հույսով լի դիմավորելու գալիքը՝ եկող արշալույսը:

Սովորաբար այդպիսի պահը մեր մեջ արթնացնում է պատասխանատվության զգացում: Այն ստիպում է մեզ մի ակնթարթ ինքնամփոփվել և հաշիվ տալ անցած օրերի համար:

Իսկ նրանք, այդ օրերը, իրենց բնույթով զանազան են: Հույսեր կան նրանցում, սպասումի օրեր, մեռնող երազներ և, ի վերջո՝ ուրախություն:



ՏԱՂ ՋՐՕՐՀՆԵԱՅ

Ասօր ձայնն հայրական
Յերկնից իջեալ հանդարտական
Սիրեցելոյ Որդւոյն վկայ
Ալ, յորդորէ, գետ յորդորէ,
Գետ Յորդանան:
Յորդորական ձայնիւ երկէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

Այսօր Սուրբ Հոգին իջեալ,
Աղաւնակերպ եւ նիւթեղէն,
Հրեղէն լեզուօք յայտնեալ ի բեզ
Ալ, յորդորէ, գետ յորդորէ,
Գետ Յորդանան:

Այսօր Կարապետն Յովհաննէս
Խայտար, ցնծայր տեսնելով
զԱստուածորդին իջմամբ ի ջուր,
Ալ, յորդորէ, գետ յորդորէ,
Գետ Յորդանան:

Գաղտնիք չէ այսօր ամեն մի հայի համար, որ մեր հույսի և ուրախության ակնկալությունները կարևոր չափով շղթայված են մեր հայրենիքի, մեր ժողովրդի հետ:

Այսօր ամեն մի անձնավորություն, անկախ տարիքից և սեռից, գիտակցաբար թե մեքենայորեն, դարձել է արձագանքողը Մայր Հայաստանի սրտի, նրա զարկերակի:

Եվ ինչպես չարձագանքես, երբ հոգուդ մեջ ծառս է լինում անարդարության և բիրտ ուժի դեմ պայքարելու մի արդար զգացում: Արդեն քանիերորդ տարին է, որ մեր գիշատիչ հարևանը չի կարողանում առարկայորեն հասկանալ ու ընդունել այն պարզ ճշմարտությունը, որ Արցախ աշխարհը իր բերանի պատառը չէ, որ այն ազատ է տնօրինելու իր ժողովրդի՝ մայրերի ու մանուկների ապագան, որ թոչող ու ուժեղ արծիվը չի կարող իր գարշապարի վրա սողացող սողունի բաժինը դառնալ: Երկինքն է նրա բնակության վայրը ու հայրենի բարձր լեռները:

Երևի այդ բոլորը հասկանալու համար ժամանակ է պետք ու պաշտպանվող բռունցք:

Թող Աստված համբերություն տա մեր չարչարակիր ժողովրդին: Իսկ մինչ այդ թշնամին շարունակում է իր վայրենի ու անմարդկային ավերները ոչ միայն Արցախի, այլ նաև՝ Հայաստանի հանդեպ:

Վեհափառ Տեր, քաղաքականությունը՝ քաղաքականություն, իսկ մեր հոգևոր ճեմարանի հարկից ներս կյանքը շարունակվում է:

Այս տարի, ի հակադրություն անցյալ ձմեռների, հոգևոր ճեմարանի դասերը ընթացան սովորականի նման և չընդհատվեցին: Ուրախություն ունեցանք նաև այս դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռի միաբանության շարքերը համալրելու ևս 10 շնորհալի սարկավագներով: Ճեմարանի ավարտական Զ լսարանի սանները արդեն աշխատում են իրենց ավարտաճառերի վրա: Ճեմարանի հարկից ներս խաղաղ, սովորական ուսումնական առօրյա է: Այդ են վկայում մեր ուսանողների տոնական տրամադրությունը և հուզումը: Չէ որ եկել ենք շնորհավորելու Ձերդ Վեհափառության նոր՝ 1994 տարին և գալիք Ս. Ծնունդը:

Եվ ոչ միայն շնորհավորելու, այլև մաղթելու Ձեզ, սիրելի Վեհափառ, երկար ու արևշատ տարիներ: Ձեր կյանքը, նրա երկարատևությունը հայ ժողովրդի անմահության լավագույն խորհրդանիշն է: Հայ ժողովուրդը մի տեսակ սովորել է Ձեր անձի մեջ տեսնելու իր ապրելու տենչը, ողջունելու կյանքի հաղթանակը սև մահի դեմ:

Ուստի թույլ տվեք, Վեհափառ Հայր, մեկ անգամ ևս ի սրտե, հանուն այստեղ հավաքված Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, շնորհավորել Ձեր Նոր տարին և հայցել Ձերդ Սրբության շնորհաբեր օրհնությունը:

Շնորհավոր Նոր տարի»:

Տեսուչ արքազան հոր խոսքից հետո հոգևոր ճեմարանի սանները աղոթական տրամադրությամբ կատարեցին Աստվածամոր բարեխոսությունը հայցող «Զանճառելի լուսոյ մայր» մեծացուցեն շարականը: Ապա Ա լսարանի սան Սամվել Թորոսյանն արտասանում է իր հեղինակած «Իմ ժողովըրդին» բանաստեղծություն-հրավերը:

Այնուհետև ճեմարանի ուսանողությունը, կատարելով Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» երգը, ներկաներին կարծես հրավիրում է Վարդանանց հիշատակումով գլուխ խոնարհել Հայաստանի սահմաններում և Ար-

ցախ աշխարհում կովող և նահատակվող մերօրյա Վարդանների, Ղևոնդ երեցների, Արտակների, Խորենների և մյուս հերոսների առջև, նաև ուխտել ամբողջ տարին անցկացնել Վարդանանց նվիրումով և պայքարով՝ պայքար ի փառս մեր հայրենիքի և ժողովրդի:

Հանուն ուսանողության Վեհափառ Հայրապետին և ներկաներին ուղղված շնորհավորական խոսքով հանդես է գալիս Զ լսարանի սան բարեշնորհ Վազգեն արկ. Գալստյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ արբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, բարեշնորհ սարկավագ եղբայրներ, սիրելի սաներ և ներկաներ:

Ամեն մեկ իմաստավորված վայրկյան հավիտենականություն է, իսկ հավիտենականությունն այլ բան չէ, եթե ոչ այսպիսի վայրկյաններում ամփոփված անսահմանություն: Աստուծո արարչության թագն ու պսակը հանդիսացող մարդը, բանականության թելադրանքով փորձել է սանձել և զբաղեցնել իր իշխանությանը չենթարկվող ժամանակը և հավիտենականությունը, սակայն ժամանակը մնացել է անփոփոխ՝ անընդհատ իր տիրակալության ներքո թրծելով, հղկելով և զարգացնելով մարդու մտածմունքը, աշխարհընկալումը և աշխարհայացքը: Ճարահատյալ մարդը պարտադրված է եղել քայլելու ժամանակին զուգընթաց՝ ուժերի գերլարումով կերտելով գեղեցիկը, լավը, բարին, և այսպիսով ժամանակը ծառա դարձնել հոգու հավերժությանը: Եվ մարդկային հոգու փայլեցրած յուրաքանչյուր գեղեցիկ վայրկյան մի աքանչելի պահ է ժամանակն ու կարգավորությունը սահմանող և դրանք Իր ամենազոր Աջով կառավարող Բարձրյալի շեշտող անդաստանում: Մի քանի վայրկյաններ ևս, և կլսվի երկրագնդի այս տարեշրջանի ի վերուստ սահմանված քայլքի սթափեցնող վերջին դոփյունը:

Մենք, որ կոչված ենք ազատության և մեր ուսերին ենք կրում մեր հայրերի Աստուծո և մաքառող ժողովրդի դժվարին, բայց սրբացնող լուծը, խորհրդածելով այս պահին հարց ենք տալիս ինքներս մեզ «արդյո՞ք կարողացանք և կկարողանանք մի անձնական ծեփ ավելացնել այս հսկայական և անհասանելի շինարարությանը, որ կատարել են մեր հայրերը՝ Մայր Եկեղեցու և Հայրենիքի արբազան սպասավորները: Եվ փորձելով պատասխան գտնել այս հարցին, սաղմոսերգուի խոսքերով մեր հոգու շրթունքների բարբառում ենք միայն. «Տեսեր, Տէր, և մի լռեր, Տէր, մի ի բացեայ առներ յինէն»:

Վեհափառ Տեր, հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության թույլ տվեք շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին և այս պատեհ առիթով վստահեցնել, որ մենք լավ ենք գիտակցում և պատկերացնում մեր Եկեղեցու ապաքելությունը հայ ժողովրդի հոգեկան, իմացական և բարոյական կյանքից ներս և, իբրև ապագայի հոգևորականներ և Քրիստոսի գինվորներ, Ձերդ Վեհափառության հայրական խոսքի ներքո պատրաստակամ և վճռական ենք խոնարհաբար ծառայելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն Տեր Հիսուս Քրիստոսի անպարփակ սիրով և անընկճելիության խորհրդանիշ արցախյան կամքով:

Վեհափառ Տեր, հավատացած եղեք. մեզ համար ներշնչանքի և ոգևորության աղբյուր է այն հանգամանքը, որ Ձերդ Սրբությունը նույնիսկ հիմնությունը, կորովը և բծախնդրությունը՝ ղեկավարելու և պայքարելու Հայ Եկեղեցու և ժողովրդի կյանքը խաթարող բոլոր գեղծումների և շեղումնե-

րի դեմ՝ առարկայացնելով և շոշափելի դարձնելով տերունական այն պատգամը, ըստ որի՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը անցնող տարի հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական փոթորկահույզ իրադարձությունների վկան եղավ: Եվ հենց այս պայմաններում առավել թրծվեցին և խարկվեցին մեր հոգիները, առավել ամրապնդվեց մեր գիտակցության մեջ նվիրաբերվելու, ընծայվելու և զոհողության ոգին երեք սրբազան հմարտությունների և սկզբունքների համար. ԱՍՏՎԱԾ, Ա.ՋԳ ՀԱՅՐԵՆԻՔ: Այս երեք սրբազնասուրբ բառերն են գրված մեր պատմության ծնունդյան վկայականում՝ նվիրագործված Ս. Գրիգոր Լուսավորչով, Ս. Մեսրոպ Մաշտոցով և այսօրվա Արցախ աշխարհի մարտնչող ժողովրդի անտեղիտալի պայքարով: Այսպես են ապրել մեր հայրերը, այսպես պետք է ապրենք նաև մենք:

Սիրելի միաբան եղբայրներ, թույլ տվեք հոգևոր ճեմարանի անունից շնորհավորանքի և երախտիքի խոսքեր ուղղել նաև ձեզ, որ ձեր բարի և հոգենորոգ պատգամներով, խորհուրդներով և գործով ցույց տվեցիք մեզ այն ճանապարհը, որով պարտավոր է քայլել ամեն մի հայ եկեղեցական՝ հավատարիմ տիրավանդ հրամանին. «Եւ որ կամիցի ի ձէնջ առաջի լինել՝ եղիցի ձեր ծառայ: Որպէս Որդի Մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց»:

Որդիական պարտականության զգացումով շնորհավորում ենք ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին, որոնք ջանադիր աշխատանքով լցրեցին մեր հոգիների դատարկ ծալքերը:

Վեհափառ Տեր, կրկին անգամ հանուն ճեմարանի ուսանողության շնորհավորելով Ձերդ Սրբության Նոր տարին, մաղթում ենք Ձեզ քաջառողջ կյանք, և որ գալիք՝ 1994 թվականը լինի Ձերդ Սրբության նոր ձեռնարկումների և իղձերի իրականացման տարի, որոնցով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կկարողանա կերտել Նոր Արշալույս»:

Բարեշնորհ սարկավագի խոսքից հետո, Ե լսարանի սան Հովհաննես Մարտիրոսյանն արտասանում է Պ. Սևակի «Հայաստան» բանաստեղծությունը:

Ավանդական «կաղանդչեքերից» ու «վիճակահանությունից» հետո, ուսանողությունը հնչեցրեց «Լուռ գիշեր» և «Տէր կեցո» երգերը, վերջինս՝ Ե լսարանի սան բարեշնորհ Գրիգոր սրկ. Ուզունյանի մենակատարմամբ:

Այնուհետև ներկաներին տարեմուտի իր օրհնության և շնորհավորանքի խոսքն է ուղղում Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍԻՆ

Սիրելի միաբանակից եղբայրներ, հոգևոր եղբայրներ և ուսանողներ, դասախոսներ և ներկաներ,

Ճիշտն ասած այսօր, երկու ժամ առաջ, երբ Վեհարանում էի և պատրաստվում էի գալ այստեղ, ձեր մեջ, մի քիչ անտրամադիր էի և կարծում եմ, բացատրելի է այդ ձեզ համար: Անտրամադիր էի՝ նկատի ունենալով մեր երկրի, մեր ժողովրդի այսօրվա տագնապալի վիճակը, ծանր վիճակը նույնիսկ, սակայն, գալով ձեր մեջ, այս ուրախ մթնոլորտի մեջ, այս կամարների տակ, լսելով ձեր երգերը, ձեր արտասանությունները, ձեր ողջույնի խոսքերը, իմ տրամադրությունը փոխվեց, և դարձա ավելի լավատես և ավելի հույսով լցված դեպի մեր ժողովրդի ապագան: Եվ հատկապես գոհ մնացի այսօրվա հանդեսի ծրագրի կատարումից: Եթե չեմ սխալվում, այս վերջին քառասուն տարիների ընթացքում ամենալավ Նոր տարու ծրագիրն էր:

Նախ երգերը. առաջին անգամը լինելով, երգերը կատարվեցին երկձայնով, շնորհավորում եմ տեսչությունը և հատկապես երաժշտության ղեկավարը: Սա նորություն էր և փոքրիկ նվաճում և պիտի ցանկամ, որ հետայսու նույնպես երգերը, խմբերգերը լինեն երկձայն: Ես կարծում եմ, Նախկացու այդ հատվածը, որ արտասանվեց, շատ նշանակալից էր մեր օրերի համար: Նաև արտասանված խոսքերը տեսչի՝ Անանիա Արբազանի շատ բովանդակալից էր և իմաստալից: Երրորդ՝ Վազգեն սարկավագի ուղերձը— խոսքը շատ հաջող էր, և չորրորդ՝ այն արտասանությունը, որ ուսանողը կատարեց՝ իր անձնական ստեղծագործությունը, նույնպես շնորհավորելի է:

Շատ գոհ եմ, որ գտնվում եմ այստեղ հիմա և աղոթում եմ առ Աստված, որ մի քանի տարի ևս առիթը ունենամ ձեր մեջ լինելու Նոր տարվա առիթով:

Մի քանի խորհրդածություն փորձում եմ ես ունենալ այս պահին: Դուք գիտեք բոլորդ աշխարհագրությունից, որ մեր երկրագունդը մեկ տարվա ընթացքում արևի շուրջ մի պտույտ է կատարում: Բայց արևի շուրջ պտույտ են կատարում նաև մյուս արբանյակները՝ առաջինը, ամենամոտը Մերկուրը ն է, երկրորդը՝ Վեներան, երրորդ տեղը գրավում է մեր երկրագունդը, չորրորդ տեղը գրավում է Մարսը, Մարսից հետո գալիս է Յուպիտերը, Ուրանոս և այլն: Այս ամենը կազմում են արեգակնային սիստեմը կամ մեր արեգակնային դրությունը: Միլիոնավոր տարիներից ի վեր այս երկնային մարմինները կատարում են այս շարժումները անթերի կերպով, ճշգրիտ կերպով, անշփոթ կերպով, կատարյալ ներդաշնակությամբ, տիեզերական ընդհանուր ներդաշնակության տարածքի մեջ: Ասում եմ այսպես, որովհետև այս անծայրածիր աստվածաստեղծ հոյակապ տիեզերքում կան բազմաթիվ արեգակներ, հարյուրավոր արեգակներ, ճիշտ մեր արեգակնային սիստեմի նման: Ամեն մի արեգակի շուրջը պտտվում են արբանյակներ, երկնային մարմիններ: Մի պահ պատկերացնում եք, տիեզերքի ամբողջ այս բազմահազար երկնային մարմինները, արեգակները և մոլորակները տիեզերքում բոլորը շարժման մեջ: Ոչ մեկը ոչ մի րոպե կանգ չի առնում, տևապես շարժվում են և այդ ընդհանուր համատիեզերական շարժումների մեջ ոչ մի խախտում չի կատարվում, ներդաշնակությունը պահպանվում է: Եվ մտածել, որ արդյո՞ք այս տիեզերական ներդաշնակությունը պատահական երե-

վույթ է, արդյո՞ք հեղինակ չունի: Կարո՞ղ էր հեղինակ չունենալ: Անշուշտ՝ ո՛չ: Եվ կարծում եմ, որ մենք՝ քրիստոնյաներս, եթե հավատում ենք Աստուծո, ահա ապացույցը այդ տիեզերական ներդաշնակությունն է աստվածային տնօրինության հրաշագործ: Բայց երբ խոսում ենք հիմա Նոր տարվա սեմին տիեզերական ներդաշնակության մասին, մի պահ եկեք մեր հայացքը դարձնենք դեպի մեր երկրագունդը, որտեղ կա՞ արդյոք նույն ներդաշնակությունը, կա՞ արդյոք, մարդկային աշխարհում կյանքի մակարդակի վրա նույն ներդաշնակությունը, ինչ որ կա տիեզերքի մեջ ամբողջ: Պարզ է, որ չկա, դժբախտաբար: Եվ Աստված նկատեց այդ թերությունը: Վաղուց տեսնելով աշխարհի վրա մարդկանց չարությունները, ներքին թշնամությունները, արյունահեղ գործարքները, պատերազմները, դուք գիտեք, Աստված ջրհեղեղով բնաջինջ արեց ամբողջ մարդկությունը և մեկին ազատեց, որ արդար, ազնիվ մարդ էր իր ընտանիքով, այն հույսով, որ ոչնչանալով ամբողջ մարդկությունը, սակայն հետո, տապանից դուրս գալով, Նոյ Նահապետը պիտի սկսի նոր մարդկության սկզբնավորումը: Այդպեսալ եղավ: Անցան դարեր, և Նոյ Նահապետի հաջորդները շարունակեցին կյանքն այս աշխարհի վրա: Դժբախտաբար, սակայն նույն մեղքերը, նույն չարիքները, նույն թերությունները երևան եկան: Հավ գործերի կողքին նաև վատ գործեր: Ահա մի երևույթ, որ մեզ հրավիրում է խորհրդածել մարդկային կյանքի իմաստի և ճանապարհի մասին: Բայց Աստված չհուսահատվեց, և 2000 տարի առաջ իր Որդին ուղարկեց, որպեսզի այս անգամ կերպարանափոխումը, բարեփոխումը մարդկային ցեղի լինի մարդ անհատի միջոցով. Հիսուս եկավ այդ պատգամը բերելու բոլոր ապրող մարդկանց անձնապես: Մենք մինչև հիմա այդ վիճակի մեջ ենք գտնվում՝ Հիսուսի պատվիրանների լույսի տակ. մեր՝ քրիստոնյաներիս առաքելությունն է, հատկապես մեզ՝ հոգևորականներիս, պայքարել մեր կյանքի շրջանակից ներս՝ հաղթանակելու համար բարին, ազնիվը, արդարը և գեղեցիկը և պարտության մատնել այն, ինչ որ չարիք է և հանցագործություն, և՛ ոճիր, և՛ արծաթասիրություն: Ահա մեր առջև դրված հարցը: Հոգևորական լինել երբեմն դուք մոռանում եք բուն իմաստը: Կարծում եք, որ սովորական զբաղմունք է՝ ժամերգություններ կամ ծիսակատարություններ կատարելով: Մինչդեռ իսկական մեր առաքելությունը մեր ժողովրդի զավակների հոգիները վերափոխելն է, որպեսզի նրանք վերածնյալ քրիստոնյաներ դառնան՝ հավատարիմ, իրատես հավատարիմ Քրիստոսի Ավետարանին, և այդ ձևով իրականանա նաև մարդկային աշխարհի մեջ տիեզերական ներդաշնակության հրաշքը: Դժբախտաբար մեր կյանքը, սակայն, հակասությունների ճանապարհով է գնում, և հենց մենք՝ հայերս, այս վերջին չորս-հինգ տարիների ընթացքում մի անգամ ևս հաստատեցինք, որ մեր աշխարհը տակավին մնում է անարդար աշխարհ, և իմ մտքիս առջև գալիս է մեր սքանչելի արցախյան աշխարհը: Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ այսքան արյունահեղություն, որ շարունակվում է մինչև հիմա, ինչո՞ւ այսքան ժողովներ արևմուտքում, որոնք չեն պաշտպանում մեզ: Վերջիվերջո ի՞նչ ուզեցին մեր դարաբաղցի րիչ ժողովրդի, ադրբեջանցիներին, ոչ մի ծանր խոսք չասացին նրանց հասցեին, մեկ բան խնդրեցին և պահանջեցին, որ հարգվի իրենց իրավունքը՝ ապրելու իրենց ազատ կամքով: Այս ազգային ինքնորոշման իրավունքի սկզբունքի հիման վրա, որ միջազգայնորեն վավերացված է և հռչակված: Ղարաբաղցի հայերը ժողով գումարեցին և այսպիսի խաղաղ, հանգիստ,

համերաշխ որոշում մը տվեցին և ի՛նչ հաջորդեց անմիջապես: Անմիջապես հաջորդեց ադրբեջանցիների կազմակերպած Սումգայիթի կոտորածը: Այս եղավ պատասխանը խաղաղասեր, բարեպաշտ արցախյան ժողովրդի: Եվ մնացածը դուք գիտեք, որ շարունակվում է մինչև այսօր: Ահա թե ինչու, ես հոգեկան տառապանքով ակնկալում եմ, որ Աստված իր երեսը մեզ դարձնի և իր տիեզերական խաղաղության շնորհը բաշխի մեզ, մեր ազգին և այս 1994 թվականի ընթացքում վերջ գտնեն մեր ժողովրդի զրկանքները և տառապանքները և հաղթանակի արդարությունը, խաղաղությունը, համերաշխությունը, ներդաշնակությունը: Ահա իմ սրտից բխած մաղթանքը այսօր և կուզեի, որ դուք՝ բոլորդ, միանաք իմ աղոթքի հետ և ձեր ձայնը բարձրացնեք դեպի երկինք՝ վասն ազատության, վասն արդարության ազգիս հայոց:

Ամանորյա ուրախ երեկոն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Կեսգիշերին Մայր տաճարի զանգերի խորհրդավոր ղողանջներն ազդարարում են հին տարվա ավարտը և Նոր՝ 1994 թվականի գալուստը:



ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՔՐԱՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ
ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ:

Ի վերջո, հայոց կրթօջախների կամարների տակ անկաշկանդորեն հընչեցին և հոգու թրթիռով միմյանց փոխանցվեցին այս լույս խոսքերը, խոսքեր, որոնք, անցնելով դարերի հոլովույթով, առավել ջերմությամբ են հընչում այսօր, ճշմարտության Ավետարանի խոսքերը նոր-նոր բարբառող կիրակնօրյա վարժարանների սաների շրթերից:

Դեռևս երկու-երեք ամիս առաջ նրանք չգիտեին, որ Քրիստոսի Ավետարանն է այն ճշմարիտ լույսի ճանապարհը, որով պետք է անցնի ամեն ոք: Սակայն ողողանջեցին հայոց հավատի զանգերն ազատորեն, և հայոց գեղեցկահնչյուն լեզվով մանուկ շրթերից հնչեցին աղոթք ու շարական: Եվ ոչ միայն այդ: Ամեն սան այժմ գոց գիտի, որ 1993 տարի առաջ Պաղեստինի մի փոքրիկ քաղաքում՝ Բեթղեհեմում, շատ համեստ, մարդկանց կողմից գրեթե աննշան անկյունում ծնվեց մի փոքրիկ մանուկ: Զարմանալիորեն, սակայն, երկնքից լսվեց հրեշտակների փառաբանական երգը, որ էր. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Հրեշտակները հանուր մարդկությանն ավետեցին սիրո, եղբայրության և խաղաղության մեծ ավետիսը:

Ի ՔԷՆ Է ՏԷՐ՝ ԱՂԲԻՒՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ...

Սուրբ Մարիամ Աստվածածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Ներսես Շնորհալի, Սուրբք Հռիփսիմյանք. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այս նվիրյալների անուններն են կրում կիրակնօրյա այն հինգ վարժարանները, որոնց կենսագրության մա-

սին որևէ խոսք ասելիս, անպայմանորեն հիշատակում են երկու-երեք ամիս խոսքը: Հիրավի հրաշք է, որն իրականություն դարձավ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կամոք և հովանավորությամբ: Այլապես մեծ և աքանչելի խոյհրդի նման, Սուրբ Ծննդյան հանդիսությունների շնորհիվ, ի վեր չէին բարձրանա ամենքիս մտքի ու սրտի վարագույրները և ականատեսը չէինք դառնա այնքան գեղեցիկ միջոցառումների:

Կիրակնօրյա վարժարանների դահլիճներում մեկ շաբաթ շարունակ հնչում էին Փրկչի Ծննդյան Ավետիսները. «Ավետիս», «Ավետիս մեծ խոյհրդի», «Լուռ գիշեր», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն Հայրական», «Այսօր տոն է», «Փառք Բեթղեհեմի Մանուկին», «Խորհուրդ մեծ և աքանչելի», «Մեծացուսցե», «Երկնավոր Հայր» և մյուս շարականների երգեցողությամբ: Ներկաներն ասես մտովի զգում էին Բեթղեհեմը, այն լուռ ու ցուրտ գիշերը, Աստուծո Որդու Մարդանալն ու ծնունդը անշուք ու մոռացված մսուրում, Սուրբ Կույսի անկրկնելի ապրումները, ծնունդից հետո Հիսուս Մանկան փառաբանությունը հովիվներից, մոգերի երկրպագությունը: Փոքրիկ բեմականացումներով վերապրում էին նաև Տիրոջ մկրտությունը Հորդանանի խաղաղ ու հանդարտիկ կոհակներում՝ Հովհաննես Մկրտչից: Այս կերպ հաղորդակից լինելով Տնօրինական անժխտելի ճշմարտություններին՝ մեկ անգամ ևս, խոնարհության ու երկյուղի զգացումը հոգիներում, ներկաները իրենց գոհունակություն էին հայտնում առ Աստված, մրմնջալով. «Ի քէն է Տէր՝ աղբիւր կենդանութեան, եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս»:

Սուրբ Ծննդյան հանդիսություններին մասնակցում և կիրակնօրյա վարժարանների ուսուցչական կազմին, տնօրինությանը, աշակերտներին շնորհավորանքի խոսքեր էին ասում ու նվերներ հանձնում հոգեշնորհ հայրեր Միքայել վարդապետ Աջապահյանը, Վազգեն աբեղա Միրզախանյանը, ինչպես նաև բարեշնորհ սարկավագներն ու ճեմարանի ուսանողները:

ԵՐԿՈՒ ՏՈՂ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ Սուրբ Մարիամ Աստվածածին կիրակնօրյա վարժարանի Սուրբ Ծննդյան հանդիսությունը, որին մասնակցում էին գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ հայրեր, արժանապատիվ տեր հայրեր, ծնողներ, հյուրեր:

Ուղիղ մեկ տարի առաջ, այս նույն դահլիճում, դարձյալ նրանք հավաքվել էին Սուրբ Ծննդյան հանդիսության: Սակայն նման էին այն մանկանը, որն առաջին քայլերն է անում, և ինքն էլ, շրջապատողների նման, իրեն ուղղված զարմացական հայացքներից քաջալերված, է՛լ ավելի է առաջ գնում, տոտիկ առ տոտիկ՝ ավելի հաստատուն ու վստահ ոտքը երկրին դնելով: Որպիսի տարբերություն: Այո՛, մեկ տարին զուր չի անցել, մեկ տարին այսօր իր խոսքն է ասում, պնդում իրենը ու հաստատում: Հասունացել են սաները: Տերունական աղոթքի հնչյուններն այլևս չեն դողում նրանց շրթներին, այլ հոգու հավատամքն են բարբառում, դառնում ավիշ՝ կենսատու հեղուկը երակների:

Քարոզներից արտասանված տողերը հնչում են որպես աղոթք-երդում առ Տերը՝ Մեծն Հիսուս: Հնչում են «Օրհնեցեք», «Մեր Տերը օրհնեցեք», «Այսօր տոն է», «Քրիստոս ծնավ և հայտնեցավ», «Սուրբ-սուրբ», «Տեր կեցո Դու զհայս», «Երկնավոր Հայր», «Օրհնյալ է Աստված» և մյուս շարականները:

«Ավե Մարիա»-ի հոգեպարար հնչյուններն են նաև տարածվում դահլիճում, որպես լույս ու խինդ, որպես անկրկնելի հրաշք անթեղվում մարդկային հոգիներում, որպեսզի հետո բարություն դառնան ու չգրված հեքիաթի թևով հյուրընկալվեն չար սրտերից ներս, ծիածանվեն ամենուր:

Հանդեսն ավարտվում է «Հայր մեր»-ով և «Հայրապետական մաղթանք»-ով:

Վարժարանի սաներին, ուսուցիչներին և ներկաներին շնորհավորանքի խոսք է ասում գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

ԽՆԿԱԾԾ ՕՐՀՆԱՆՔԸ ՁԵՐ ԵՂԻՑԻ ՄԵՋ ՎԱՌ ԿԱՆԹԵՂ...

Սուրբ Ծննդյան հանդիսությունների ավարտից հետո կիրակնօրյա վարժարաններում դասավանդող շուրջ հիսունհինգ ուսուցիչ-ուսուցչուհիներ եղան Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջինի մոտ՝ ստանալու նրա հայրական օրհնանքը որպես բարի ու ամենակարող ուղեկից:

Հանդիպմանը ներկա էին նաև Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սաթուրյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, Մայր Աթոռին կից քարոզչական կենտրոնի ղեկավար հոգեշնորհ Տ. Միքայել վարդապետ Աջապահյանը, կիրակնօրյա վարժարանների վարիչ-տնօրեն հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը, կիրակնօրյա վարժարանների տնօրեններ և ուսուցիչներ բարեշնորհ Վարուժան, Սարգիս և Գրիգոր սարկավագները:

Դեռ մեկ տարի առաջ, երբ ավարտվեցին քրիստոնեական քարոզչական կենտրոնի դասընթացները, նույն գեղեցկատես սրահում, երկու Հայրապետների օրհնանքով ու ձեռամբ ստանալով վկայականներ և նաև իրավունք՝ մատաղ սերնդին Քրիստոսի Ավետարանի ճշմարիտ լույսը քարոզելու, ուսուցչուհիները Հոր, Որդու, Սուրբ Հոգու և Վեհափառ Տիրոջ առջև երդվեցին հավատարիմ մնալ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, բարձր պահել ազգի, Եկեղեցու պատիվն ու միությունը, լինել հայ մանուկների ճշմարիտ հավատի իսկական դաստիարակները:

Դեպի հավիտենական ճշմարտություն՝ տանող ճանապարհի առաջին քայլերն արդեն արվել են: Վկայագրերը Սուրբ Ծննդյան գեղեցիկ հանդիսություններն էին:

Տերունական աղոթքից հետո, ուսուցչուհիների կատարած աշխատանքների երախայրիք-գնահատանքի խոսքը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հայր Վազգենը.

«Վեհափառ Տեր,

Դեռևս թարմ են այն հիշողությունները, որ երկու տարի առաջ նույն հենց այս գեղեցկատես սրահում Ձերդ Վեհափառության կողմից Մայր Աթոռի քրիստոնեական քարոզչական կենտրոնի երկամյա դասընթացներն ավարտած ուսուցիչներին տրվեցին վկայականներ, որոնց համաձայն ուսուցչուհիները թույլտվություն ստացան, Ձերդ Սրբության օրհնությամբ, քարոզելու ավետարանական ճշմարտությունները և մեր մատաղ սերնդին ջամբելու այն մեծ հոգևոր ժառանգությունն ու իմացությունը, որ մեզ են փոխանցել մեր Եկեղեցու սրբազան հայրերը: Մարգարեական շնչով էիք լցված, Վեհափառ Տեր, այդ օրերին, երբ տերունական խոսքով դիմեցիք

մեր ուսուցչական կազմին՝ ասելով, թե գնացեք և իրոք Ավետարանի խոսքը քարոզեցեք մեր ժողովրդին, որովհետև նոր պայմաններում, ազգային հոգևոր վերազարթոնքի մեր իրականությունում և մանավանդ հայոց պետականության նոր-նոր կառուցողական քայլերին բնականաբար անհրաժեշտությունը կար, որ Մայր Եկեղեցին իր խոսքն ասեր մեր ժողովրդին, առավել ևս մեր մանուկներին: Եվ այդ մարգարեական խոսքերը, այդ ակընկալիք-տեսիլքները, Վեհափառ Տեր, այսօր իրականություն են դարձել շնորհիվ ուսուցչական կազմի անձնդիր և շատ նվիրական աշխատանքների: Այսօր այդ նվիրումի և այդ օրհնության որպես արդյունք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին կից գործում են հինգ կիրակնօրյա վարժարաններ, որոնցում դասավանդվում են Սուրբ Գիրք, Հայ Եկեղեցու պատմություն, Եկեղեցու տոնագիտություն, շարականագիտություն, վարք սրբոց առարկաները: Ավելի քան 1500 աշակերտներ ներգրավված են այդ դասալսումներին, և աշակերտությանը ուսուցչական իրենց գործունեությունն են բերում մեր լսարանի հիսունհինգ ուսուցիչ-ուսուցչուհիներ: Նրանց ջանքերով վերջին շրջանում կազմակերպվեցին Սուրբ Ծննդյան հանդիսություններ, և պետք է գոհունակությամբ հայտնեմ, Վեհափառ Տեր, որ Էջմիածին քաղաքն իր շրջանով ցնծություն ապրեց և այն ուրախությունն ունեցավ, թե իրոք «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»: Ողջ ժողովուրդը հոգևոր ցնծության մեջ էր, որովհետև ճշմարիտ հոգևոր վերազարթոնքը կարծես թե նոր-նոր է, որ մենք փորձում ենք ճաշակել: Ուսուցչական կազմի ջանքերով, Վեհափառ Տեր, նաև կազմվեցին հանրակրթական դպրոցների կրոնի ուսուցման ծրագրեր, ընտրվեցին դասագրքեր, որոնց հիմնական մասն այսօր պատրաստ է հրատարակության և հույս ունենք, որ սեպտեմբեր ամսից Երևանի ու Էջմիածնի մի քանի դպրոցներում պիտի դասավանդվեն կրոնի դասեր: Այս կերպ մեր մյուս մանուկները ևս, ովքեր ներգրավված չեն կիրակնօրյա վարժարաններում, ծանոթ կլինեն Սուրբ Գրքին: Վեհափառ Տեր, այս եկեղեցաշեն և աստվածահաճո գործունեությանն իրենց մեծ մասնակցությունն է բերում նաև Մայր Աթոռի գիտվորյալ միաբանությունը, ի թիվս նրա հայր Միքայել վարդապետ Աջապահյանը և Մամիկոն աբեղա Քիլեճյանը, նրանց թվում նաև մեր բարեշնորհ Վարուժան, Գրիգոր և Սարգիս սարկավագները, ովքեր անձնդիր կերպով փորձում են իրենց ունեցածը, եկեղեցական ավանդություններով հանդերձ, փոխանցել մեր ուսուցիչներին, նրանց միջոցով՝ նաև մեր մանուկներին: Հոգևոր վերազարթոնքի այս կարևոր պահերին, Վեհափառ Տեր, մեզ համար շատ քաջալերական էր Ձերդ Վեհափառության կողմից ստանալու օրհնությունները, այն ջերմագին և շատ շինիչ խոսքերը, որոնցով մեր ուսուցչական կազմը և մեր հոգևոր դասը, լցված Սուրբ Հոգու շնորհներով, փորձում են նոր կյանք իրականացնել: Հիրավի, Վեհափառ Տեր, Ձեզ բախտ է վիճակվել ապրելու Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանը, որ, կարծես թե, մի նոր իրականության առջև կանգնած լինելով, նոր քարոզչական աշխատանքներ են տարվում մեր ժողովրդին վերընծու մեծ հավատքը: Այսօր Դուք ինքներդ հաղորդակից եք լինում այդ իրականությանը և տեսնում, որ աշխատանքներն ընթացքի մեջ են: Հույսով ենք, մեր մատաղ սերնդի կրթության և դաստիարակության այդ կարևոր պահը անպայմանորեն պիտի իրականացվի և իր վերջնակետին հասնի հաղթական ավարտով:

Վեհափառ Տեր, այսօր այստեղ է մեր ողջ ուսուցչական կազմը, և մեր ուսուցիչները Ձերդ Վեհափառությանը բերել են իրենց շնորհակալական ու երախտիքի խոսքը՝ ասելու Ձերդ Վահափառությանը, որ այդքան հայրական գորովանքով ու ներիրումով մեծ հնարավորություններ եք ստեղծում իրենց աշխատանքի համար՝ այս կերպ օգնելով նաև մեր մատաղ սերնդի հոգևոր կրթությանն ու դաստիարակությանը»:

Ուսուցչական կազմի անունից Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհակալության ու երախտիքի խոսք ասաց ուսուցչուհի Սուսաննա Խաչատրյանը.

«Վեհափառ Տեր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին կից գործող կիրակնօրյա վարժարանների բացումը նոր, շեշտող զարթոնք պարգևեց մեր քաղաքի, շրջանի առօրյա կյանքին:

Այսօր, մեր ժողովրդի այս դժվարին պահին, միակ հուսադրող, ապավինող քայլը կիրակնօրյա հոգևոր վարժարանների բացումն է ամենուր:

Վեհափառ Տեր, մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ձերդ Սրբությանը և աղոթում առ Աստված, որ ունենաք պողպատյա առողջություն, որպեսզի այս ազգանվեր գործը ափովի ողջ Հայաստան աշխարհով: Այդ հոգևոր սնունդը, իբրև մանանա, Եկեղեցու երիտասարդ հոգեշնորհ հայրերի անմնացորդ ներիրումով, ճիշտ ժամանակին իջեցրիք մեզ համար: Անչափ ուրախ ու գոհ ենք այդ հայտնության համար: Որպես Մաշտոցի գործի շարունակողներ, խոստանում և պարտավորվում ենք Եղիշեից Եղիշե ձգվող մաքառման ոգին և Ավետարանի պատգամները հաղորդել մատաղ սերնդին: Նրանց մոտ համոզմունք դարձնել, որ Ավարայրի, Ձիրավի և այլ գոյապայքարների հաղթանակների պատճառը ոչ միայն զինվորների քաջություն էր, այլև Ներսես Մեծի, Ղևոնդ երեցի և այլոց ծնկաչոք աղոթք-աղաղակը առ Աստված: Մենք ուժ ու եռանդ չենք խնայի՝ մեր մանկանց հոգևոր կրթություն տալու, Ավետարանի սրբազան խորհուրդները, Հիսուսի պատգամները, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նկատմամբ սերը կրկնապատկելու գործում, ուսանելով ուսուցանել և դառնալ ու դարձնել ճշմարիտ քրիստոնյա:

Մենք առաջնորդվում ենք Մատթեոս ավետարանչի այն խոսքերով, թե մանուկներինն է երկնքի արքայությունը:

Եթե նախկինում կոմունիստները բարձրաձայն հորջորջում էին, թե կրոնը հաշիշ է, ապա այսօր, ի հակադրություն այդ անմտության, համոզվում և ապացուցում ենք, որ կրոնը ոչ թե հաշիշ է, այլ՝ սպեղանի, մարդու բարոյական դեմքը կերտող հզոր միջոց, մանավանդ քրիստոնեությունը՝ Տիրոջ պատվիրաններով հանդերձ:

Ինչպես որ քրիստոնեությունն իր լույսը բերեց հայոց աշխարհ և մեզ ազատեց կռապաշտությունից, այնպես էլ կիրակնօրյա վարժարանների բացումը հայտնություն եղավ մեր քաղաքի համար և փրկություն՝ մանուկներին բարոյական անկումից ազատելու աստվածահաճո գործում:

Հիշենք Փրկչի խոսքը, թե մարդ չի ապրում միայն հացով, այլև՝ Աստծո խոսքով: Հավուր պատշաճի կհնչի Ձերդ Սրբության հետևյալ միտքը. «Ինչպես ծառն ու ծաղիկը կարիք ունեն նյութական արևի լույսի, այնպես էլ մեր հոգիները կարիքը, ծարավն ունեն իմանալի լույսի, որով մեր համամարդկային կյանքը հոգեբարոյապես այժմ ծաղկում և պտղաբերում է»:

Ինչպես մեր ժողովուրդը քրիստոնեությամբ կերտեց իր ոսկեդարը, այնպես էլ մեր մանուկներն են իրենց արտերը բացել Քրիստոսի լույսի ա-

ուաջ: Այսօր բոլորս մեծ և աքանչելի խորհուրդ ենք տեսնում, երբ կիրակնօրյա վարժարանների բեմահարթակներից մանուկներն իրենց անապական շուրթերով ավետիս են տալիս մարդկանց, և ամենքը ցնծություն են ապրում այդ պահին:

Օգտվելով առիթից, Վեհափառ Տեր, թույլ տվեք բոլորիս կողմից շնորհավորել Ձերդ Սրբությանը Ամանորի և Սուրբ Ծննդյան առթիվ՝ մաղթելով քաջառողջություն և երկարակեցություն, որպեսզի Ձեր օրհնաբեր ուղեկցվի այդ հոգևոր վերազարթոնքը, իսկ մենք մնանք միշտ աղոթող Ձերդ Սրբության առողջության և հայրենանվեր գործունեության համար»:

Այնուհետև հնչեցին Վեհափառ Հոր թևավորող և շինիչ խոսքը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆԱՆՔԻ ԽՈՍՔԸ

Ես շատ հուզված եմ այս պահին, որովհետև առաջին անգամն է իմ կյանքում, իբրև Կաթողիկոս, որ ինձ մոտ են գալիս էջմիածնաբնակ մտավորական տիկիններ, ուսուցչուհիներ, ովքեր դասավանդում են մեր հանրային դպրոցներում Էջմիածին քաղաքում և շրջաններում: Գալիս են ինձ մոտ ուսուցչուհիներ Քրիստոսի անունով, ուսուցչուհիներ, ովքեր վերջին մեկ-երկու տարվա ընթացքում հետևել են կրոնական դասընթացների, դասընթացներ, որոնք կազմակերպեցին մեր Մայր Աթոռի միաբանները՝ գլխավորությամբ հայր Վազգեն արեղայի, որ քիչ առաջ խոսք առավ և շատ գեղեցիկ խոսք արտասանեց: Դուք բոլորդ պատրաստված եք արդեն ձեր հերթին դասավանդելու կրոնական գիտելիքներ հանրային վարժարանների մեր աշակերտությանը Էջմիածին քաղաքում: Սա բացառիկ երևույթ է, ինձ համար և՛ հուզիչ, և՛ մխիթարական, և՛ գոտեպնդիչ:

Գնահատում եմ նախ մեր միաբանների աշխատանքը, ովքեր այստեղ են՝ վարդապետներ, սարկավագներ, որ հետևողական կերպով աշխատեցին, որպեսզի դուք բավարար չափով գիտելիքներ ամբարեք, որ հետո ձեր հերթին դասավանդեք մեր մատաղ սերունդին: Քիչ առաջ լսեցի նաև ձեր անունով խոսքը տիկին Սուսաննայի, որ աքանչելի մի խոսք էր, իսկապես ավետարանական շունչով, Սուրբ Գրական շունչով, քրիստոնեական շունչով և Հայ Եկեղեցու, Հայ Առաքելական Եկեղեցու ավանդությունների շունչով: Նույնիսկ մի քիչ զարմացա: Այո՛ զարմացա, որ այսքան համեմատաբար կարճ ժամանակամիջոցում դուք հասել եք քրիստոնեական ոգու ակունքներին: Տիկին Սուսաննայի արտասանած խոսքը լոկ մտավորական տիկնոջ մը խոսքը չէր, այլ քրիստոնյա մտավորականի խոսք էր: Եվ դա ես բարձրորեն գնահատում եմ: Մաղթում եմ, որ բոլորդ այդ ոգով ներշնչվեք ձեր ապագա գործունեության:

Դուք կարող եք հարց տալ, թե ինչո՞ւ համար այս օրերին մենք անհրաժեշտ ենք գտնում քրիստոնեական ոգով դաստիարակել նոր սերունդները, ինչո՞ւ համար: Արդյոք այդ կարիքը կա՞: Հարգելի տիկնայք, քրիստոնեությունը մի ամբողջ գաղափարախոսություն է՝ ապրելու և գործելու, բայց հիմնովին տարբերվում է այլ տեսակի գաղափարախոսություններից: Պատմության ընթացքին, այս երկու հազար տարիների ընթացքում, տարբեր տեսակի գաղափարախոսությունները եկել ու անցել են՝ առավելապես կարճ ժամանակի մը ընթացքում տիրապետելով: Ինչպես մեզ մոտ շուրջ 70 տարի տիրապետեց մարքսիստական գաղափարախոսությունը, որին դուք բավական ծանոթ եք երևի: Ես էլ անձնապես ծանոթ եմ: Մի գաղափարա-

խոսություն էր մարքսիստական գաղափարախոսությունը, որ իր ժամանակն ապրեց ու հանգավ և արդեն այսօր որևէ այժմեություն չի ներկայացնում ո՛չ մեզ մոտ, ո՛չ էլ ամբողջ աշխարհում: Անցողական մի մտածումի հոսանք էր, գուցե սկզբնական շրջանին լավ մտադրություններով, մարդասիրական մտադրություններով, մանավանդ անցյալ դարու երկրորդ կեսին, երբ կազմավորվեց մարքսիստական կամ պատմական մատերիալիզմի գաղափարախոսությունը: Սակայն երբ գործադրվեց այն, ստացվեց, որ այդ գաղափարախոսությունը սնանկացած գաղափարախոսություն է, և դրա համար փուլ եկավ անսպասելի կերպով, բոլոր, այսպես կոչված, սոցիալիստական երկրներում: Կարճ ասած, մի գաղափարախոսություն էր, որ եկավ ու անցավ: Միակ գաղափարախոսությունը, որ 2000 տարիներե ի վեր մնում է կենդանի և այժմեական, քրիստոնեական գաղափարախոսություն է, քրիստոնեական ուսմունքը կամ, ավելի ճիշտ, կրոնական արտահայտությամբ՝ Քրիստոսի Ավետարանն ինքը իր ողջ բովանդակությամբ, իր սկըզբունքներով, իր պատվիրաններով, իր հորդորներով և իր հրամայականներով: Խոսողներից մեկը՝ հայր Վազգենը, ասաց, որ մենք, իբրև ժողովուրդ, վերապրում ենք Գրիգոր Լուսավորչի օրերը: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, ինչպես գիտեք, Դ դարու սկզբին քարոզեց և հիմնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, 1700 տարի առաջ, երբ հայ ժողովուրդը ընդունեց քրիստոնեական կրոնը: Այսօր էլ մենք գրեթե նույն թարմությամբ վերապրում ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրերը և աշխատում ենք վերստին քրիստոնյա դարձնել մեր ժողովուրդը, որ կարճ ժամանակի համար բռնի ուժով հեռացվեց այդ սուրբ հավատքից: Ահավասիկ մի սքանչելի առաքելություն, որ բացվում է մեր ու ձեր առջև, որ պատիվ է բերում ձեզ: Բայց ես կրկնում եմ իմ հարցումը. ինչո՞ւ մեր ժողովրդին վերստին քրիստոնյա դարձնենք, ինչո՞ւ համար: Պարզապես նրա համար, որ 1700 տարի առաջ հայ ժողովուրդը քրիստոնյա՞ դարձեր է, կամ պարզապես, որ մենք այդպե՞ս ենք փափագում: Ո՛չ, դա մեր ցանկություններից ու անմիջական փափագներից կամ մտածումներից վեր սկզբունք է: Իմ կարծիքով, բոլորիս հիմնական նպատակը պետք է լինի Քրիստոսի Ավետարանը քարոզել, տարածել, հայ ժողովուրդը վերստին հարազատ, ամբողջական իմաստով քրիստոնյա դարձնել, որպեսզի կերտվի նրա բարոյական նկարագիրը, որ խաթարվեց 70 տարիների ընթացքում, և մեր ժողովուրդը կորցրեց իր բարոյական դիմագիծը, իր ազնվություն ու առաքելությունը, որոնք դարերի ընթացքում կազմավորվել էին:

Մեր հասարակական կյանքը շատ տուժեց: Մեր հասարակական կյանքում երևացին բազմաթիվ տեսակի հոռի կողմեր, անբարոյական գործընթացներ, անարդարություններ, անհավասարություններ, եսասիրական, եսամոլական ձգտումներ, նույնիսկ ավազակային գործարքներ: Հարկ էր, որ իսկապես քրիստոնեական ոգին արթնանար և գործեր, որպեսզի վերականգնվեր հայ ժողովրդի բարոյական նկարագիրը, ազնվական նկարագիրը՝ գերծ թերություններից, եսամոլական և այլ տեսակի վատառողջ երևույթներից: Ահա, իմ կարծիքով, հիմնական նպատակը մեր քրիստոնեական ուսուցման, քարոզչության՝ բարձրացնել բարոյական մակարդակը մեր ժողովրդի կյանքի: Այսօր էլ, հենց մեր օրերում էլ, տակավին բազմաթիվ անօրինական գործեր են կատարվում հասարակական կյանքում, դուք գիտեք ինձանից լավ, հափշտակություններ, գողություններ, թշնամանքներ, տեսակ-տեսակ վատառողջ երևույթներ, ընտանեկան կյանքի մեջ նույնիսկ

երբեմն ոչ բարոյական երևույթներ: Իրապես, հետևաբար, մեր ժողովուրդը կարիք ունի բարոյական վերածննդյան, բարոյական վերազարթոնքի, ազգային զարթոնքի հետ զուգահեռ: Անհավասիկ, իմ կարծիքով, իմաստը մեր աշխատանքի՝ պատրաստել նոր սերունդներ, որոնք զերծ լինեն անբարոյական ամեն տեսակի չարիքներից և տկարություններից: Քրիստոսի պատգամները բացառիկ բարոյական պատգամներ են: Ամեն մեկ պատգամի վրա կարելի է խորհրդածել և մի ամբողջ կյանքի ճանապարհ բաց անել մեր առջև: Ավետարանը մի գիրք է, որ սովորական գրքի նման չպետք է կարդանք: Ավետարանը պետք է միշտ մեր ձեռքի տակ լինի, որովհետև ամեն անգամ, որ կարդում ենք, կարծես մի նոր մտքի լույս է ծագում մեր մեջ, նոր մեկնաբանություն: Հավիտենական ճշմարտություններ կան Քրիստոսի Ավետարանի մեջ, և մենք միշտ պետք է այն պահենք մեր սրտի մոտ, մեր մտքին մոտ և մեր աշխատանքին մեջ, մանավանդ դուք, որ կրոնական դասեր եք ավանդում: Հետևաբար, մեկտեղելով մեր ասածները, եզրակացնեմ, որ դուք նվիրված եք մի վեհ գործի իրականացման, մեր ժողովրդի բարոյական դիմագիծը վերականգնելու, մեր ժողովրդի հոգևոր-բարոյական վերածնունդն ստեղծելու և կազմավորելու: Ահա այս ոգիով մենք հրավիրում ենք ձեզ մոտենալ կրոնական դասերին և, մանավանդ, Քրիստոսի Ավետարանին, որ ավելի քան երբեք, հենց մեր օրերում այժմեական է, հրամայական է, օգտակար է, մարդասիրական է և փրկարար: Տա Աստված, որ ձեր գործը հետքհետե ավելի ծավալվի, ուրիշներ էլ զինվորագրվեն: Երևանում էլ լինում են նման դասընթացներ, բայց բոլոր շրջաններում անհրաժեշտ է այդ գործը կատարել: Այս աշխատանքը պետք է ընդարձակվի և տարածվի մեր ամբողջ հանրապետության տարածքի վրա: Այս է մեր իդեալը, մեր առաջադրանքը և մեր աշխատանքը: Ես խոր գոհունակություն եմ հայտնում, որ դուք նվիրված եք այդ աշխատանքին, գնահատում եմ ձեզ և տալիս եմ իմ օրհնությունն ամենքիդ: Աստված ձեզ պահի-պահպանի քաջառողջ, եռանդուն, հավատավոր և միշտ պատրաստ աշխատանքի՝ կրոնական գործն առաջ տանելու համար:

«Ողջ լերուք զօրացեալք Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի մէնջ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

«Երթայք խաղաղութեամբ եւ Էր Յիսուս եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանց»: Ամեն:

Վարձքերնիդ ի կատար:

ԵՎ ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏ...

Ոգեշինիչ հանդիպումն ավարտվում է «Հայրապետական մաղթերգ»-ով: Հոտնկայս երգում են բոլորը: Իսկ Վեհափառ Հայրապետը խոստանում է կրկին տեսնվել նրանց հետ, օգնել իր խրատ-խորհուրդներով և, որ ամենակարևորն է, հոգում թև տվող հայրական ամենակարող օրհնանքներով, քանզի, ինչպես ինքն է նշում Ամերիկայում 1989 թվականին արտասանած քարոզում, «Աստված մեռած չէ, և մարդը՝ մարդու մեջ: Մենք հանրային աստվածապաշտությամբ գնում ենք դեպի հավերժություն: Մենք էլ եկանք այդ հավատքով, կենդանի Աստուծո հավատալով, ճանաչելով ու սիրելով պիտի առաջնորդենք մանուկներին դեպի հավերժություն...»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, շաբաթ.—Կաղանդ, Տարեմուտ:
Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և պատարագի վերջում Իջման ս. սեղանից հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

* * *

Հունվարի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 5-ին, չորեքշաբթի.—Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի ատիթով, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը և «Հայր մեր»ից առաջ օրվա տոնի առթիվ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 6-ին, հինգշաբթի.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ծննդյան հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 7-ին, ուրբաթ.—Բ. օր Ծննդեան: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս.

պատարագ մատուցեց Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

* * *

Հունվարի 9-ին, կիրակի.—Դ օր Ծննդեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունվարի 13-ին, չորեքշաբթի.—Ը օր Ծննդեան: Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, օրվա մեծ տոնի առիթով ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 15-ին, շաբաթ.—Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր Աթոռի Մկրտարանում ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

* * *

Հունվարի 22-ին, շաբաթ.—Սրբոց Հայրապետացն Աթանասի և Կիւրղի:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հունվարի 23-ին, կիրակի: Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 29-ին, շաբաթ.—Սրբոցն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինւորացն:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հունվարի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբղ. Զիրեկյանցը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ





ԿՐՈՆԱ—ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵՆԷ ՄԸ ՎԵՐԱՊՐԱԾ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

1898-ին, Բրօֆ. Խալաթեանց հանդէս եկաւ Էջմիածինի «Արարատ» ամսագիրին և յետոյ՝ առանձին գիրքով մը յայտնելու գիտական աշխարհին թէ յայտնաբերած է հատուած մը Հայ Աստուածաշունչի «հնագոյն» թարգմանութենէ մը[1]: Խալաթեանց առաջնորդուած էր Սարգիս Վրդ. Մալեանի մէկ տեղեկութենէն, ուր Երուսաղէմի միաբանը յայտնած էր թէ Երուսաղէմի ձեռագիրներէն մէկուն մէջ, որ ծանօթ է Երզնկայի Աստուածաշունչ անունով, կը գտնուի Մնացորդաց Գիրքերու բոլորովին տարբեր թարգմանութիւն մը: 1773-ին, Սարգիս Վրդ. բաղդատած էր Աստուածաշունչի և Աւետարանների ձեռագիրները կազմելու համեմատութեան տախտակ մը տարընթերցուածներու: Այնտեղ յիշատակած էր Երզնկայի Աստուածաշունչի պարագան, որ արժանացած էր Խալաթեանցի ուշադրութեան: Սկիզբը, Խալաթեանց կարծած էր, թէ նորայայտ թարգմանութիւնը Աւորերէնէ Հայերէնի կատարուած առաջին թարգմանութիւնն է: Աւորերէն բնագիրին հետ իր կատարած բաղդատութիւնը յայտնած էր, թէ նորագիւտ թարգմանութիւնը յունարէն այլ բնագիրէ մը կատարուած է:

Նոյն եզրակացութեան եկաւ նաև Հ. Համազասպ Ոսկեանը, որ նոյն Երզնկայի Աստուածաշունչի մէջ գտած էր Երգ Երգոց Գիրքի մէկ այլ թարգ-

---

[1] **Գրիգոր Խալաթեանց**, Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան: Ջանաջինն ած ի լոյս ըստ կրկին ձեռագիր օրինակաց հանդերձ բ. լուսագիր նմանատպութեամբք նոցին Գրիգոր Խալաթեանց, Մոսկվա, 1899, էջ ԺԲ:

մանութիւն մը, տարբեր Թարգմանիչներուն վերագրուած Աստուածաշունչի Հայերէն թարգմանութենէն[2]:

Յայտնութեան Գիրքին քննական հրատարակութիւնը կատարող Ֆրեուերիք Մուրատ գտած էր նաև, թէ Երզնկայի Աստուածաշունչ ձեռագիրին մէջ պահուած բնագիրը տարբեր է Զօհրապեանի և Բագրատունիի հրատարակած բնագիրներէն[3]:

Մենք ևս, Սաղմոսաց Գիրքի վերահրատարակութեան և անոր թարգմանութեան պատրաստութեան ընթացքին, նշմարեցինք, որ Ս. գրական Օրհնութիւնները, որոնք կցուած են Սաղմոսներուն, լուրջ տարբերութիւններ կը ներկայացնեն Զօհրապեանի և Բագրատունիի Աստուածաշունչներու բնագիրէն:

Սաղմոսաց Գիրքի մեր հրատարակութեան առթիւ մենք ընտրած էինք ոչ թէ Աստուածաշունչին մէջ գտնուող գիրքը, այլ Եկեղեցիին մէջ գործածուած գիրքը, որ աղօթագիրքի ձևով պատրաստուած հնագոյն կարգաւորութիւնն է, ծանօթ իբրև «Սաղմոսերգութիւն»:

Վանքերուն մէջ Սաղմոսերգութիւնը կը կատարուի Գիշերային Ժամէն առաջ: Վանականները կը կատարեն զայն գործածելով Ատեանի Ժամագիրքին սկիզբը դրուած Սաղմոսներու Գիրքը: Այնտեղ Սաղմոսները բաժնուած են ութ կանոններու, որոնցմէ իւրաքանչիւրին վերջաւորութեան աւելցուած են Աստուածաշունչի տարբեր գիրքերու մէջ գտնուող երգերէն մին կամ երկուքը: Իւրաքանչիւր կանոն կը բաղկանայ խումբ մը Սաղմոսներէ, որոնց կը հետևի Հին կամ Նոր Կտակարանի երգ մը կամ աւելի: Ս. գրական այն երգերը կը կոչուին Օրհնութիւններ:

Օրհնութիւններ կոչուած այն երգերուն թարգմանութեան ատեն անդրադարձանք, որ Սաղմոսներգութեան կանոնին մէջ պահուած բնագիրը տարբեր է Աստուածաշունչին մէջ պահուած նոյն ընթերցուածի բնագիրէն: Այսպէս, ի յայտ եկան աստուածաշնչական զանազան գիրքերու հատուածներ, որոնք դասական նկատուած թարգմանութենէն կը տարբերին: Բոլորն ալ երգեր են, ինչպէս սաղմոսները:

Սաղմոսաց կանոններուն կցուած Հին Կտակարանին երգերն են.

ա. Մովսէսի և Իսրայելացիներուն Օրհներգութիւնը, Գիրք Ելից, ԺԵ. 1—19, որ կը սկսի այսպէս. «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ»:

բ. Մովսէսի երկրորդ Օրհներգութիւնը, Գիրք Երկրորդումն Օրինացս, ԼԲ. 1—43. «Նայեցարուք Երկինք և խօսեցայց...»:

գ. Սամուէլ Մարգարէի մօր՝ Աննայի աղօթքը, Ա. Թագաւորութեանց Գիրք, Բ. 1—11. «Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր...»:

դ. Եսայի Մարգարէին Օրհնութիւնը, Եսայի Մարգարէութիւն, ԻԶ. 9—20. «Ի գիշերաց կանխէ հոգի իմ...»:

ե. Եզեկիա Թագաւորի աղօթքը, Եսայի ԼԸ. 9—21. «Ես ասացի ի վերանալ աւուրց իմոց...»:

զ. Եսայի Մարգարէին Օրհնութենէն, ԽԲ. 10—13 և ԽԵ. 8—10. «Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր...»: Նաև՝ Յովնանու Մարգարէի պա-

---

[2] Հ. Ա. 1924, էջ 215—233, 297—311, 409—418: Հրատարակուած նաեւ իբրեւ գիրք, Վիեննա, 1924:

[3] **Յայտնութիւն Յովհաննու,** հին հայ թարգմանութիւն, գտաւջինն ած ի լոյս... **Ֆրէտէրիք Մուրատ:** Ցերուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1905—1911:

ղատանքը, Յովնաանու Մարգարէութիւն, Բ. 3—10. «Ի ձեղութեան իմում ես առ Տէր կարդացի...»:

է. Ամբակում Մարգարէի աղօթքը, Մարգարէութիւն Ամբակումայ, Գ. 1—19. «Տէր, զլուր քո լուայ և երկեայ...»:

ը. Դանիէլի Գիրքին Երից Մանկանց Օրհնութիւնը, Գ. 26—46. «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց...»:

Իսկ Նոր Կտակարանէն, հետևեալ երգերը.

թ. Ղուկասու Աւետարանէն Մարիամի աղօթքը, Ա. 47—56. «Մեծացուսցէ անձն իմ զՏէր...», Զաքարիայի օրհնութիւնը, Ղուկաս Ա. 68—79. «Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի...» և Սիմէոն Ծերունիի աղօթքը, Ղուկաս Բ. 29—32. «Արդ արձակեա...»:

Առաջին Օրհնութեան բնագիրին բաղդատութիւնը Հ. Արսէն Բագրատունիի խմբագրած Աստուածաշունչի (Վենետիկ, 1860) բնագիրին հետ ի յայտ բերաւ բացայայտ ճշմարտութիւն մը, որ Սաղմոսաց կանոններուն մէջ պահուած աստուածաշնչական հատուածները ոչ թէ տարընթերցուածներով կը տարբերին ծանօթ բնագիրէն, այլ պարզօրէն թարգմանութեան մը մնացորդներն են, տարբեր՝ Աստուածաշունչի Հայերէն թարգմանութիւն կոչուած բնագիրէն:

Նկատի առնելով, որ առաջին Օրհնութիւնը կը պատկանի Ելից Գիրքին, որուն քննական հրատարակութիւնը ունինք արդէն շնորհիւ Անդրանիկ Զէյթունեանի պատրաստած և մեր հրատարակած աշխատութեան, որոշեցինք բաղդատական աշխատանքը սկսիլ սոյն բնագիրով: Սաղմոսաց կանոնին բնագիրը կը նշենք **Ա.** գիրով: Անոր իւրաքանչիւր համարին կցուածը, նշուած **Բ.** գիրով և գրուած նախորդէն տարբեր տառատեսակով, կը ներկայացնէ Բագրատունիի խմբագրութիւնը:

Ա. բնագիրին տարընթերցուածները ևս քաղած ենք Զէյթունեանի հրատարակութենէն, որովհետև ան նկատած է արդէն թէ Մովսէսի Օրհնութիւնը կը գտնուի Սաղմոսաց առաջին կանոնին վերջաւորութեան: Իրեն յատուկ խղճմտութեամբ, Ելից գիրքի ձեռագիրները բաղդատելէ ետք, կազմելու համար քննական իր բնագիրը, ան բաղդատած է նաև Սաղմոսաց Գիրքի տասն և երկու հնագոյն ձեռագիրներու մէջ գտնուող Մովսէսի Օրհնութեան բնագիրը և, էջատակին՝ նշած է տարընթերցուածները: Իր օգտագործած ձեռագիրները ան նշած է հետևեալ լատին տառերով.

a	Մատենադարանի համար	287	ձեռագիր, թուական 1258
b		142	1262
c		195	1284
d		6473	1298
e		182	1303
f		183	1308
g		3412	1314
h		10118	1321
i		10182	1346
j		354	ԺԴ.
k		5299	ԺԴ.
l		7605	ԺԴ.

Բացի համար 5266 ձեռագիրէն, միւս բոլորը կը համապատասխանեն **Ա,.** այսինքն Սաղմոսաց Գիրքին և Ատեանի ժամագիրքին մէջ պահուած բնագիրին: Ասոնց միջև կան անշուշտ մանր տարբերութիւններ, սակայն ճոյն թարգմանութեան տարբերակներն են անոնք:

Բ. բնագիրը հրատարակուած է ըստ Բագրատունիի Աստուածաշունչի վերն յիշեալ բնագիրին:

Ա. և **Բ.** բնագիրները քով քովի բերուած կը ներկայացնեն հետևեալ պատկերը.

1.— ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ՈՐԴՒՈՑՆ ԻՍՐԱՅԷԼԻ:
(ԵԼԻՑ ԺԵ. 1—19):

Աւրհնեացուք զտէր զի փառաւք է փառաւորեալ: Ա.
1 Աւրհնեացուք զտէր զի փառաւք է փառաւորեալ: **Բ.**

Զհեծեալս և զերիվարս ընկէց ի՛ ծով.
Զերիվարս և զհեծեալս ընկէց ՚ի ծով.

Աւգնական ընդունելի իմ տէր, և եղեւ ինձ ՚ի փրկութիւն:
2 աւգնական ընդունելի իմ տէր, և եղեւ ինձ ՚ի փրկութիւն:

Սա է իմ աստուած և փառաւոր առնեմ զսա. աստուած հաւր իմոյ և բարձր արարից զսա:
Սա է իմ աստուած և փառաւոր առնեմ զսա. աստուած հաւր իմոյ և բարձր արարից զսա:

Տէր խորտակէ զպատերազմունս, տէր անուն **նորա:**
3 Տէր խորտակէ զպատերազմունս, տէր անուն նորա:

Զընտիրս արանց և զընտիրս սպառազինաց, զկարս և զերիվարս և զամենայն զաւրութիւն փարաւոնի ընկէց ՚ի ծով:
4 Զկարս փարաւոնի և զզաւրութիւնս նորա ընկէց ՚ի ծով, զընտիրս հեծելոց և զպատուազէնս ընկղմեցան ՚ի ծով կարմիր:

Ծով ծածկեաց զնոսա. ընկղան յանդունդս խորոց իբրեւ զվէմս:
5 Խորք ծածկեցին զնոսա ընկղան յանդունդս իբրեւ զվէմ:

Աջ քո տէր փառաւորեալ է զաւրութեամբ իւրով. աջ քո տէր խորտակեաց զթշնամիս քո:
6 Աջ քո տէր փառաւորեալ է զաւրութեամբ իւրով. աջ քո տէր խորտակեաց զթշնամին:

Եւ մեծութեամբ փառաց քոց մաւրեցեր զհակառակորդս քո. առաքեցեր զբարկութիւն սրտմտութեան քոյ և եկեր զնոսա որպէս զեղէգն:
7 Եւ բազմութեամբ փառաց քոց մաւրեցեր զհակառակորդս. առաքեցեր զբարկութիւն քո և եկեր զնոսա իբրեւ զեղէգն:

Յոգի զաւրութեան սրտմտութեան քո պատառեցան ջուրք. դիզան կացցն ՚ի մէջ ծովուն:

Եւ մեծութեամբ փառաց քոց մաւրեցեր զհակառակորդս քո. առաքեցեր զբարկութիւն սրտմտութեան քոյ և եկեր զնոսա որպէս զեղէգն:
7 Եւ բազմութեամբ փառաց քոց մաւրեցեր զհակառակորդս. առաքեցեր զբարկութիւն քո և եկեր զնոսա իբրեւ զեղէգն:

Յոգի զաւրութեան սրտմտութեան քո պատառեցան ջուրք. դիզան կացցն ՚ի մէջ ծովուն, և պաղեցան դիզան ալիք ջուր-

8 Եւ հողմով սրտմտութեամբ քով պատառեցաւ ջուրք. պաղեցաւ իբրեւ զպարիսպ քարեայ ջուրք, և պաղեցաւ ալիք 'ի մէջ ծովուն:

Ասաց թշնամին, ասէ հալածեցից հասից հարից. բաժանեցից զաւարն, և լցուցից 'ի ցոցանէ զանձն իմ:

9 Ասաց թշնամին, հալածեցից և հասից. բաժանեցից զաւարն, և լցուցից 'ի ցոցանէ զանձն իմ:

Ի տուր իմ արկից զնոսա. տիրեսցէ և բարձրասցի 'ի վերայ ցոցա ձեռն իմ:

Սատակեցից սրով իմով. տիրեսցէ ցոցա ձեռն իմ:

Առաքեցեր զհողմն քո և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան և իջին որպէս կապար 'ի ջուրս սաստիկս:

10 Առաքեցեր զհողմն քո և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան իբրեւ կապար 'ի ջուրս սաստիկս:

Ո՞ նման է քեզ յաստուածս տէր. կամ ո՞վ նման է քեզ փառաւորեալդ 'ի սուրբս:

11 Ո՞վ իցէ նման քեզ յաստուածս տէր. կամ ո՞վ նմանիցէ քեզ փառաւորեալդ 'ի սուրբս:

Սքանչելի փառաւորեալ՝ որ առնես զնշանս և զարուեստս.

Սքանչելի փառաւք՝ որ առնես զնշանս:

ձգեցեր զձեռն քո, և եկուլ զնոսա երկիր:

12 ձգեցեր զաջ քո, և եկուլ զնոսա երկիր:

Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քոյ, այս զոր և փրկեցեր:

13 Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քում այսմ զոր փըրկեցեր:

Եւ մխիթարեցեր զաւրութեամբ քով 'ի բանակետղ սրբութեան քո.

Եւ մխիթարեցեր զաւրութեամբ քով 'ի բանակետղ սրբութեան քո.

լուան ազգք և բարկացան, և երկունք կալան զբնակիչս փղշտացւոց:

14 լուան ազգք և բարկացան, և երկունք կալան զբնակիչս քանանացւոց:

Յայնժամ փութացան դատաւորք եդովմայ, և իշխանք մովաբացւոց:

15 Յայնժամ փութացան տագնապեցան դատաւորք եդովմայ, և իշխանք մովաբացւոց:

Կալաւ զնոսա դողումն. հալեցան ամենայն բնակիչք քանանացւոց:

Կալաւ զնոսա դողումն. հալեցան ամենայն բնակիչք քանանացւոց:

Անկցի 'ի վերայ ցոցա սիւ և երկիւղ. և 'ի զաւրութենէ բազկի քո քարացին:

16 Անկցի 'ի վերայ նոցա ահ և երկիւղ. մեծութեամբ բազկի քո քա-
րասցին:

Մինչև անցցէ ժողովուրդ քո տէր, մինչև անցցէ ժողովուրդ քո՝ այս զոր ստացար:

Մինչև անցցէ ժողովուրդ քո տէր, մինչև անցցէ ժողովուրդ քո՝ այս զոր ստացար:

Տարեալ տնկեսցես զնոսա 'ի լերին ժառանգութեան քոյ, 'ի պատրաստութիւն բնակութեան ժառանգութեան քոյ:

17 Տարեալ տնկեսցես զնոսա 'ի լեառն ժառանգութեան քոյ, 'ի պատ-
րաստութիւն բնակութեան քոյ:

Զոր ստացար 'ի սկզբանէ տէր, ստացար սրբութեամբ, զոր պատրաստեցին ձեռք քո.

Զոր արարեր տէր սրբութիւն տէր, զոր պատրաստեցին ձեռք քո.

տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից՝ և եւս:

18 տէր թագաւոր յաւիտեան և յաւիտեանս և եւս:

Զի եմուտ փառաւան կառաւք և երիվարաւք և ընտիր սպառազինաւք 'ի մէջ ծովուն:

19 Զի մտին երիվարք փարաւոնի կառաւք և հեծելովք նորա 'ի ծով:

Եւ ած 'ի վերայ նոցա տէր զջուրս ծովուն. և որդիքն իսրայէլի գնացին ընդ ցամաք 'ի մէջ ծովուն:

Եւ ած 'ի վերայ նոցա տէր զջուրս ծովուն. և որդիքն իսրայէլի գնացին ընդ ցամաք 'ի մէջ ծովուն:

Նոյն երգին երկու թարգմանութիւններու գոյութեան սոյն փաստը դըժուար է բացատրել: Շատ հաւանական կը թուի, թէ Ատեանի Ժամագիրքի բնագիրը աւելի հին թարգմանութիւն է, որովհետև աղօթագիրքը գործածուած է Եկեղեցիին մէջ և երգը երգուած է յիշողաբար: Թերևս աւելի հին թարգմանութիւն է ան, քան գիրերու գիւտը, երբ յիշողութեամբ կը պահուէին Ս. Գրոց ընթերցուածները և արարողական մասերը: Յամենայն դէպս, անտարակոյս որ անոնք կային գիրերու գիւտէն անմիջապէս ետք, երբ կատարուեցան առաջին թարգմանութիւնները: Թարգմանիչները սպասած պիտի չըլլան Աստուածաշունչի ամբողջական թարգմանութեան, որպէսզի անջատեն երգերը և աւելցնեն զանոնք Սաղմոսասացութեան կանոններուն:

Իբրև Եկեղեցիին մէջ գործածուելիք գիրք, Սաղմոսներու կանոնները թարգմանուած պիտի ըլլան առանձինն, հետևելով միւս հին Եկեղեցիներու մէջ գործածուած սաղմոսերգութեան աւանդութեան: Անոնք ընդօրինակուած են շատ աւելի մեծ թիւով, մինչդեռ Աստուածաշունչի ձեռագիրները անհատական ստացողներու գործածութեան համար պատրաստուած շատ աւելի նուազ թիւով տարածուած ձեռագիրներ են:

Սաղմոսաց գիրքերը գործածուած են նաև իբրև դասագիրք՝ լեզուն սորվելու և, ընդհանրապէս, անոնց պարունակած սաղմոսներն ու երգերը

անգիր կերպով պահուած են ուսուցիչներու և աշակերտներու յիշողութեան մէջ, աւանդուելէ առաջ սերունդէ սերունդ:

Առաջին Օրինութեան նման, միւս բոլոր վերև ցուցակագրուած Օրինութիւնները ներկայացուցիչներն են «հնագոյն» աւանդութեան մը: Բայց թէ ե՞րբ, ո՞ւր և որո՞ւ ձեռքով թարգմանուած են, դժուար է ըսել: Այսքանը գիտենք միայն, թէ Ժամագիրքը կազմողներն են «Ս. Սահակ Հայրապետ և Ս. Մեսրոպ Վարդապետ, Գիւտ և Յովհան Մանդակունի», ինչպէս յիշատակուած է մինչև այսօր Ժամագիրքին սկիզբը:

Երբ նկատի ունենանք թէ հասած են մեզի «հնագոյն» նման բնագիրներ Հին Կտակարանի երկու այլ գիրքերու՝ Մնացորդաց և Երգ Երգոց, կը տարուինք մտածելու, թէ եղած պիտի լինին նաև այլ բազմաթիւ գիրքեր, եթէ ոչ ամբողջ Աստուածաշունչի գիրքերը, նման թարգմանութեամբ: Կրնա՞յ ըլլալ, թէ ասոնք են Ս. Մեսրոպի կատարած առաջին թարգմանութիւնները, սկսեալ Առակաց գիրքէն...:

Սոյն յօդուածին սահմանները նեղ են միւս բոլոր Օրինութիւններու երկու թարգմանութիւնները ներկայացնելու: Պիտի բաւականանանք ներկայացնելով նաև «Մեծացուսցէ»ն, Նոր Կտակարանէն:

Յարդ մեր կատարած պրպտումները յայտնաբերած չե՛ն Աւետարանի ձեռագիրի մը մէջ Նոր Կտակարանի երեք երգերու տարբեր թարգմանութիւնը, նման Սաղմոսաց Գիրքին մէջ պահուածին: Այստեղ ևս պատ մը գոյութիւն ունի Աստուածաշունչի բնագիրին և Սաղմոսաց գիրքի բնագիրներուն մէջ, այսինքն թարգմանութիւններէն մին կը գտնուի միայն Աւետարաններուն մէջ, իսկ միւսը՝ միայն Սաղմոսաց գիրքերուն մէջ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ.
(Ղուկաս ա. 47—56):

Մեծացուսցէ անձն իմ զտէր, և ցնծացէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով:

47 Մեծացուսցէ անձն իմ զտէր, և ցնծացաւ հոգի իմ յաստուած փրկիչ իմ:

Այլ արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք:

48 զի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա:

49 Զի արար ինձ մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար ազգէ յազգ երկիւղածաց իւրոց:

50 և ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց.

արար զօրութիւն բազկաւ իւրով: Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից:

51 արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց:

և քակեաց զհզօրս յաթոռոց: Զխոնարհս բարձրացոյց,
52 քակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս:

զկարօտս ելից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս:
53 Զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր:
54 Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յիշել զողորմութիւնս:

Որպէս խօսեցաւ առ հարս մեր, աբրահամու և զաւակի նորա յաւիտեան:
55 Որպէս խօսեցաւ առ հարս մեր, աբրահամու և զաւակի նորա յաւիտեան:

Երբ, օր մը, քննութեան ենթարկուին Աստուածաշունչի բոլոր ձեռագիրները և Սաղմոսաց գիրքին ու Ժամագիրքին բոլոր ձեռագիրները, հաւանական է, որ աւելի պարզ կ'երևի Հայ Աստուածաշունչի բնագիրին զարգացման պատմութիւնը: Մինչ այդ, պիտի բաւականանանք գիտնալով, թէ եղած են Աստուածաշունչի հայերէն երկուքէ աւելի թարգմանութիւններ, որոնցմէ հնագոյնին հետքերը միայն ծանօթ են մեզի:

ՇԱՀԷ ԱՐՔԵՊ. ԱՃԷՄԵԱՆ

«ԱՍՏՎԱԾ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ ԹՈՂ ԼՈՒՅՍ ԾԱԳԵՑՆԻ»
(Քարոզ՝ խոսված Մայր տաճարում, հունվարի 23-ին)

«Յաւնուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Պարտ է հաւնդարտութեամբ խրատել զհակառակողսն, թերևս տացէ նոցա Աստուած ապաշխարութիւն ի գիտութիւն ճշմարտութեան» (Բ Տիմ. Բ 25):

«Հակառակվողներին պետք է հանդարտությամբ խրատել, որպեսզի թերևս Աստված նրանց ապաշխարություն շնորհի՝ հասնելու համար ճշմարտության գիտությանը»:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Այս խոսքերը վերցված են Պողոս առաքյալի կողմից Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակից, մի նամակ, որը գուցե առավել չափով, քան որևէ մեկ այլ Նոր Կտակարանյան գործ, հովվական ծառայության լծված մարդկանց համար մեծագույն իմաստություններ ու ճշմարտություններ է պարունակում: Այս նամակում Պողոս առաքյալը հորդորում է իր աշակերտ Տիմոթեոսին՝ ասելով, թե՝ «աշխատիր քո անձը Աստծո առջև ընտիր ներկայացնել, մերժիր պիղծ ու սնոտի խոսքերը, հրաժարվիր հիմար ու անխրատ հարցերից», սակայն միևնույն ժամանակ շեշտում է, որ «Տիրոջ ծառան չպետք է կռվի, այլ պետք է լինի հեզ, ուսուցիչ, անոխակալ և հակառակվողներին պետք է խրատի հանդարտությամբ»:

«Հակառակվողներին խրատել հանդարտությամբ»:

Այսօր, մեր առօրեական կյանքում, երբ հանդիպում ենք այնքան շատ դժվարությունների թե՛ կենցաղային և թե՛ ընկերային բնագավառներում, թերևս մեր ականջներին տարօրինակ կարող է հնչել «հակառակության դեմ հանդարտություն» արտահայտությունը, երբ մեզանից յուրաքանչյուրը՝ այր թե կին, աճել թե ջահել, գտնվում է հոգեկան առավել լարվածության մեջ և դիմացինի մեջ է փնտրում բոլոր այն դժբախտությունների պատճառը, որոնք կրում է իր ուսերին:

Այնուամենայնիվ, Պողոս առաքյալն իր այս խոսքով բացահայտում է մեկ հավիտենական ճշմարտություն, որը ճշմարիտ էր ինչպես այն ժամանակ, ճշմարիտ է նաև այսօր: Որևէ մի թերություն, որևէ մի արմատացած

մոլորություն չի կարելի հաղթել, չի կարելի ենթարկեցնել միևնույն միջոցներով: Եթե մի կողմում հակառակություն է, ապա այդ հակառակությանը հնարավոր չէ հաղթել հակառակությամբ, այլ կարելի է հաղթել միայն հանդարտությամբ, հեզությամբ, խոնարհությամբ ու աստվածային խաղաղությամբ: Քանզի Աստված Ինքը խաղաղության ու հանդարտության Աստված է...

Այս պարագային կարող ենք թեկուզ հիշել Հին Կտակարանից մի սքանչելի դրվագ, որը գեղեցիկ կերպով բացահայտում է Աստծո էության այդ կողմը: Դա այն դեպքն է, երբ Աստված հայտնվելու էր Եղիա մարգարեին՝ ցույց տալու համար նրան իր ապագա գործունեության ընթացքն ու ճանապարհը: Եվ երբ Եղիան աղոթքի ու առանձնության մեջ սպասում էր Տիրոջ հայտնությանը, հանկարծ ուժգին հողմ բարձրացավ, որը լեռներն էր դղրդացնում և վեմերն էր խորտակում, սակայն, ինչպես ասում է Ս. Գիրքը, «Տերն այնտեղ չէր»: Եվ փոթորիկից հետո երկրաշարժ եղավ, սակայն Աստված այնտեղ չէր: Ապա երկրաշարժին հաջորդեց կայծակ ու ամպրոպ, և սակայն Աստված դարձյալ այնտեղ չէր: Հուսկ ապա Եղիայի ականջին փչեց մեղմ օդի մի հոսանք և այդ օդի հոսքի մեջ հնչեց Աստծո ձայնը (Գ Թագ. 11—12):

Այսպես էր նաև, որ Հիսուս Իրեն հայտնեց որպես ճշմարիտ խաղաղության իշխան, երբ ալեկոծված ծովի վրա, ի տես Իր աշակերտների խռովության, Ինքը միայն մնաց հանդարտ, Ինքը միայն մնաց խաղաղ և ասաց. «Ես եմ, մի վախեցեք» (Հովհ. Զ 20):

Սիրելիներ, այսպես է, որ Աստված Իրեն հայտնել է և շարունակում է հայտնել որպես խաղաղության ու հանդարտության Աստված: Վերոհիշյալ այս երկու աստվածաշնչական պատումների լույսի տակ մենք կարող ենք տեսնել, թե ինչպիսի հզոր ուժ կարող է իր մեջ պարունակել հանդարտությունն ու խաղաղությունը, որը մեր ներաշխարհային կյանքում կարող է մեր բնության ամենաանբասիրելի ու ամենագեղեցիկ հատկությունը կազմել: «Հանդարտություն» ասելով չպետք է երբեք հասկանալ անգործություն, անտարբերություն, արհամարհելի չեզոքություն, այլ ակտիվ գործունեություն, աշխատանք, կարեկցանք, հարատև աղոթք: Այս պատճառով էլ Պողոս առաքյալը նշում է հանդարտությամբ խրատելու պարագան՝ խրատել, որը թերևս մարդկային կյանքի ամենագործնական ու որոշիչ երևույթներից մեկն է, քանզի յուրաքանչյուր անհատ իր առաջին քայլերը կատարելիս իր ծնողների ու մեծերի խրատներով է կանխորոշում իր ապագա կյանքի ընթացքը: Եվ կարևոր է, որ խրատը բխի սրտի զուլալ ակունքներից, լինի ինչպես ճշմարտացի, այնպես էլ խաղաղ, այն մեղմ ու հանդարտ ջրերի պես, դեպի ուր առաջնորդում է մեզ Աստված՝ ըստ սաղմոսերգուի (Սաղմ. ԻԲ 2):

Պողոս առաքյալը, սակայն, ավելի հեռուն է գնում՝ մեզ պատվիրելով հանդարտությամբ խրատել ո՛չ թե սոսկ մեր զավակներին, ո՛չ թե լոկ մեր յին՝ Ավետարանին հակառակվողներին: Ինչպես երեկ, այնպես էլ այսօր բոլոր ժողովուրդների մեջ լինում են մարդիկ, ովքեր, խաբվելով սատանայությունները, իրենց մտքի կամայական անդրադարձումներով վերլուծել Ս. Գրքի այս կամ այն հատվածը և փորձում են իրենց հետևից տանել շատե-

ճարակ են գտնում» (Բ Տիմ. Բ 17) և այդ սոսկալի ախտի նման օրավուր տարածվում են՝ վարակելով շատ ու շատ մարդկանց:

Այսօր էլ մենք կանգնած ենք նման հակառակվողների գոյության ու գործունեության փաստի առջև: Կարծես թե բավական չէր մեր ժողովրդի այսօրվա ծանր ու տագնապալի տնտեսական կացությունը, որը խոր ու ցավոտ հետք է թողնում յուրաքանչյուրի հոգեկան կերտվածքի վրա: կարծես թե բավական չէին մեր ժողովրդի ընկերային կյանքում տեղ գտած աղաղակող անարդարությունները, անհավասարությունները և դրանցից բխող ցավալի երկպառակությունը: Կարծես թե բավական չէին այն մեծաթիվ զոհերը, որոնք մենք տալիս ենք ամեն օր Հայաստանի ու Արցախի զանազան հատվածներում: Եվ ահա սատանան մի նոր որոգայթ էլ է լարում մեզ համար, մեր միջից հանելով մարդկանց, ովքեր, հակառակության ոգով լցված, փորձում են ցեխ շպրտել մեր Եկեղեցու և մեր ազգային ավանդությունների վրա՝ երկպառակություն սերմանելով նաև կրոնական գետնի վրա:

Այդպիսի մարդիկ հիրավի նման են հսկաների ուսերին կանգնած թզուկների, որոնք հավակնում են ավելին տեսած լինել, քան այն հսկաները, որոնց ուսերին այնպես բազմել են իրենք: Նրանք չեն գիտակցում կամ էլ գիտակցաբար փորձում են մոռանալ, որ իրենք իրենց գոյությամբ իսկ պարտական են 2000-ամյա նահատակ Եկեղեցուն և անուղղակի կերպով օգտվում են այդ Եկեղեցու կուտակած անբավելի իմաստությունից ու գանձերից: Նրանք փորձում են մոռանալ, որ իրենք իրենց այսօրվա վիճակով իսկ պարտական են իրենց նախորդող հսկաներին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցից սկսած մինչև Կոմիտաս վարդապետ: Երեկ և այսօր նույն սատանան է, որ փորձում է որոմ ցանել մեր շարքերում և հակառակության ոգի սերմանել ամենուրեք, ուր որ Ավետարանի ուղղափառ մեկնություն է փորձում հրնչել...

Սակայն մեկ անգամ ևս վերադառնալով Ավետարանական պատգամին, հիշենք, որ առաքյալը կոչ է անում նման հակառակվողներին խրատել հանդարտությամբ, քանզի նրանք մեր և ձեր քույրերն ու եղբայրներն են, որոնք բանասարկուի այս կամ դրդումով այսօր հեռացել են ճշմարիտ հավատքից ու դավանությունից: Ուստի եթե մենք ցանկանում ենք և նախանձախնդիր ենք, որ մեր շարքերը լինեն առավել հզոր ու մեծաքանակ, ուրեմն ոչ թե մեր երեսները պետք է շուռ տանք նրանցից, այլ մոտենանք նրանց և խրատենք հանդարտությամբ, խաղաղությամբ ու սիրով, և ոչ թե կռվարարությամբ, ընդվզումով ու հակառակությամբ: Քանզի որտեղ հակառակություն կա, այնտեղ Աստված բացակա է: Քանզի այն, ինչ ճշմարիտ է ու հավիտենական, գոռալու և գոչելու կարիք չունի՝ ապացուցելու համար իր իրավացիությունը, ինչպես Աստված, որ խաղաղություն է, կարիք չունի հակառակությամբ պայքարելու «հակառակորդի» հետ, այլ Իր խաղաղությամբ իսկ ընդգծում է սատանայի ու բոլոր դիվային ուժերի հակառակության ոգին: Այնպես էլ մենք, պետք է այս ոգով մոտենանք բոլոր այն մարդկանց, ովքեր փորձում են հակառակվել ոչ թե սոսկ մեզ, այլ Ավետարանին ու Եկեղեցուն, որպեսզի Աստված նրանց սրտերում ու հոգիներում լույս ծագեցնի, որպեսզի նրանք հասկանան, զղջան, ապաշխարեն ու վերադառնան դեպի ճշմարտության գիտությունը, և ոչ թե լինեն նրանց նման, ովքեր «հանապազ ուսանում են և ճշմարիտ գիտությանն այդպես էլ երբեք չեն հասնում» (Բ Տիմ. Գ 7):

Այսօր, սիրելիներ, Առաջավորաց պահոց Բարեկենդանի օրն է, այսինքն մի օր, երբ մենք պարտավոր ենք նախապատրաստվել Առաջավորաց պահքին: Առաջավորաց պահքը, որ տևում է հինգ օր՝ վաղվանից սկսյալ, հաստատվել է Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից նախքան հայոց դարձն ու մկրտությունը, որպեսզի համայն հայ ժողովուրդը ազգովին ապաշխարեր, դարձի գար իր մոլորություններից ու մոտենար ճշմարիտ աստվածճանաչությանը: Եվ առաջավորաց պահքը, որպես այդպիսին, հանդես է գալիս ոչ թե սոսկ որպես անհատական պահեցողության մի ձև, այլ հանրազգային ապաշխարության մի օրինակ, երբ յուրաքանչյուր անհատ իրեն զգում է ազգ կոչվող մեծ հավաքականության մի կարևոր մասնիկը և աղոթում ու ապաշխարում է համայն ազգի մեղքերի թողության համար: Այսօր թերևս ես ձեզ չեմ կարող կոչ անել խստակյաց պահեցողության, քանզի մեր տնտեսական տագնապալի կացության պայմաններում մենք բոլորս էլ հանապազօր ակամա պահեցողության մեջ ենք: Սակյաև ես ձեզ բոլորիդ կոչ եմ անում Առաջավորաց պահոց այս առաջիկա հինգ օրերը անցկացնել աղոթքով ու խոկումով, անցկացնել որպես համազգային ապաշխարության մի շրջան: Եվ երբեք մի կարծեք, թե դուք յուրաքանչյուրդ կամ այստեղ հավաքվածներդ փոքրաթիվ և ոչ էական մասն եք ազգի, այլ ունեցեք այն գիտակցությունը, թե հենց դուք եք լինելու այն թթխմորը, որով պետք է խմորվի համայն հայ ժողովրդի զանգվածը և վերադառնա իր ճշմարիտ աստվածճանաչությանն ու իրական ավետարանական ոգուն:

Եվ նաև այսօրվա ավետարանական պատգամի լույսի տակ չմոռանանք աղոթել նաև մեր այն եղբայրների ու քույրերի համար, ովքեր մոլորված դեգերում են այս կամ այն աղանդավորական ուսմունքների ու վարդապետությունների շուրջ: Թող Աստված առաքյալի իղձին համապատասխան ապաշխարություն շնորհի նրանց, որպեսզի մոտենան այն ճշմարտության գիտությանը, որն ուրիշ տեղ չի պահպանվել ու փոխանցվել, եթե ոչ Մայր Եկեղեցու միջոցով: Աղոթենք, որպեսզի նրանք ավետարանական անառակ որդու նման վերադառնան իրենց Մայր Եկեղեցու գիրկը, որն սպասում է իրենց: Աղոթենք, որպեսզի նրանք զուրկ չմնան մեր Եկեղեցու արբազան հաղորդությունից, որից իրենք իրենց կամովին զրկել են: Եվ թող ամենուրեք հաղթանակի սերն ու խաղաղությունը և համազգային համերաշխությունը. Ամեն:

ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ



ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԻՑ

ՍԱՂՄՈՍ Դ

1.—Երգուսույցին
2.—Երբ քեզ դիմեցի, դու ինձ լսեցիր
ըստ արդարության, ո՜վ իմ Աստված.
ևեղության մեջ ինձ խաղաղեցրիր,
ողորմի՛ր ինձ, լսի՜ր իմ աղոթքը:
3.—Մարդկանց որդիներ,
մինչև ե՞րբ պիտի խստասիրտ լինեք,
ինչո՞ւ եք սիրում ևաևրությունը
և սուտը փնտրում:
4.—Իմացե՛ք, որ Տերը հրաշքներ գործեց
իր սրբի համար,
և երբ Տիրոջը դիմեմ,
Նա ինձ կլսի:
5.—Բարկացե՛ք, բայց մի մեղանչեք,
ինչ որ ձեր սրտերում խորհեք,
զղջացեք ձեր անկողիններում:
6.—Արդարության զոհեր մատուցեք
և Տիրոջ վրա ձեր հույսը դրեք:
7.—Շա՜տ են ասողները,
թե՝ «ո՞վ պիտի ցույց տա մեզ բարություն»:
Քո տեսքի լույսը մեր վրա շողաց
8.—և ուրախություն տվիր մեր սրտերին:

Նրանց հագեցրիր ցորենի, գինու և ձեթի արդյունքով,
9.—խաղաղության այս վստահությամբ
պիտի ննջենք և արթնանանք,
10.—որովհետև, ո՜վ Տեր, միայն դու ես
ապահովությամբ մեզ բնակեցնում:

ՍԱՂՄՈՍ Ե

1.—Երգուսույցին
2.—Ունկն դիր, Տե՜ր, իմ խոսքերին
և նկատի առ իմ աղաղակը:
3.—Ուշադիր եղի՛ր աղոթքիս ձայնին.
թագավոր իմ, Աստված իմ,
4.—աղաչում եմ քեզ, Տե՜ր,
առավոտ վաղ լսի՜ր ձայնս.
առավոտ վաղ պատրաստ կլինեմ
դեմդ ելնելու:
5.—Դու չես կամենում անօրենություն,
չարերը քեզ մոտ չեն բնակվում,
6.—անօրենները չեն բնակվելու քո աչքերի առջև:
7.—Անօրենություն գործողներին ատում ես դու,
կորուստի ես մատնում ստախոսներին:
Արյունահեղ և նենգավոր մարդը, Տե՛ր,
պիղծ է քեզ համար,
8.—մինչ ես քո առատ ողորմության շնորհիվ
տունդ կմտնեմ,
կերկրպագեմ քո երկյուղով
քո սուրբ տաճարում:
9.—Տե՜ր, քո արդարությամբ ինձ առաջնորդի՛ր,
իմ թշնամիների պատճառով
ուղիղ արա՛ իմ առջև քո ճանապարհը,
10.—նրանց բերանների մեջ
ճշմարտություն չկա՛
և նրանց սրտերը նաևիր են,
11.—նրանց կոկորդները բաց են՝
ինչպես գերեզմանը,
նրանք նենգավոր եղան իրենց լեզուներով:
Դատի՛ր նրանց.
Ո՜վ Աստված,
թող նրանց խորհուրդները կործանվեն
իրենց ամբարշտությունների համար:
Մերժի՛ր նրանց,
որովհետև քեզ դառնացրին:
12.—Ուրախ պիտի լինեն քեզ հուսացողները
և հավիտյան ցնծան
և դու նրանց եջ պիտի բնակվես:
Քո անունը սիրողները

պիտի զվարճանաւ քեզանով,
13.—որովհետև դու օրհնում ես արդարին, ո՜վ Տեր,
և հաճությամբ պատում ես նրանց՝
ինչպես վահանով:

ՍԱՂՄՈՍ Զ

1.—Երգուսույցին
2.—Տե՛ր, քո սրտմտությամբ ինձ մի՛ հանդիմանիր
և մի՛ խրատիր քո բարկությամբ:
3.—Ողորմի՛ր ինձ, Տե՜ր, որովհետև հիվանդ եմ ես
բժշկի՛ր ինձ, որովհետև քայքայվեցին ոսկորներս,
4.—իմ հոգին խռովեց հույժ, իսկ դու, Տե՛ր, մինչև ե՞րբ...
5.—Դարձի՛ր, Տե՜ր, և փրկի՛ր ինձ,
ապրեցրո՛ւ ինձ, Տե՜ր, քո ողորմությամբ,
6.—որովհետև մահվան մեջ չկա մեկը, որ հիշի քեզ.
կամ դժոխքում, որ քեզ խոստովանի:
7.—Ես հոգնեցի իմ հեծությամբ,
ամեն գիշեր լվանում եմ մահիճս
և իմ արցունքներով թրջում անկողինս:
8.—Սրտմտությունից աչքս խռովեց,
և ես մաշվեցի —
իմ բոլոր թշնամիների պատճառով:
9.—Հեռացեք ինձանից բոլորդ,
որ անօրենություն եք գործում,
10.—որովհետև Տերը լսեց հեկեկանքս,
լսեց աղաչանքս
և աղոթքս ընդունեց:
11.—Թող ամաչեն և խռովեն
իմ բոլոր թշնամիները,
թող ետ դառնան և ամաչեն հույժ
և շուտով խռովեն:

Թարգմ.՝ Ա. Ե.

ԱՆՑՅԱԼԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԷՋԵՐԻՑ

ԵԿԵՂԵՑՎՈ ԿՈՉՈՒՄԸ(*)

(Պատմական լուսո մեջ)

Բոլոր կրոնների պսակը քրիստոնեությունն է: Որովհետև կրոններից ոչ մեկը բարոյական կատարելության այնպիսի գաղափար չէ տվել, ինչպես քրիստոնեությունը: Այդ կատարելության թանձրացյալ պատկերը Հիսուսի անձնավորությունն է, իսկ մշտական կենդանարար աղբյուրը Նորա ավետարանը: Մարդկության առաջ դրված հոգևոր այս անգնահատելի գանձը յուր իսկությամբ և մաքրությամբ ըմբռնելու համար, թողնենք քրիստոսաբանական վեճերն ու դավանաբանական ձևակերպությունները, որ ոչ մասնագետների համար ըստ ամենայնի հասկանալի չէ, և մեր հոգու մեջ պատկերացնենք միայն ավետարանի Հիսուսը և Նորա հարաբերությունն առ Աստված: Եվ ահա մեր առաջ կանգնած կտեսնենք մարդկանցից սուրբն ու մաքուրը, որ երբ և իցե ապրել է այս մեղավոր երկրագնդի վերա: Ի՞նչ է նորա մեծության, գերբնականության խորհուրդը բնականության մեջ, եթե կարելի է այսպես արտահայտել: Միմիայն նորա կրոնական զգացմունքը, որով Նորա շունչն ու հոգին, կամքն ու գործը, Նորա ամբողջ էությունը ստորադրված էր Աստուծո կամքին՝ այսինքն բացարձակ արդարության, սիրո և ճշմարտության չափին: Կրոնն ու բարոյականությունը, մարդասիրությունն ու կարեկցությունը անքակտելի միություն են կազմում Նորա անձնավորության և քարոզած ավետարանի մեջ. սեր առ Աստված և առ ընկերը՝ ահա քրիստոնեական կրոնի էությունը:

Քրիստոնեության մրամնացումն ու ներկայացուցիչը պատմության մեջ Եկեղեցին է: Քրիստոս ինքը կազմակերպված Եկեղեցի չէ հիմնել, բայց բնական էր նորա այդպիսի զարգացումը: Եկեղեցին յուր նվիրապետական

(*) Գրված է Տ. Մատթեոս Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության ժամանակ:

և համայնական կազմակերպությամբ, յուր կրթական և բարեգործական հաստատություններով, քարոզով և աստվածապաշտությամբ.. միայն մի բարձրագույն նպատակի արդյունք է—**սրբազան մի մարդկություն դաստիարակել արժանի Հիսուսի անվան,** արժանի նրա եղբայրակցության և Աստուծո որդեգրության: Նա ավետարանական ճշմարտությունների մատակարարն է հոտի համար, և ձգտում այդ սկզբունքները կյանքի հիմնաքար դարձնել: Ինչպես քրիստոնեության Հիմնադրի առաջին խոսքը ապաշխարության կամ ներքին վերածնության քարոզն էր, հոգևոր փրկության և հավիտենական կյանքի ավետիսը, այդպես եղել է և գաղափարական Եկեղեցվո համար և պիտի լինի, եթե յուր նպատակից չէ շեղվում: Նա կամենում է ճշմարտության անշեջ լապտեր դարձնել մարդկային հոգին, որպես զի արժանի լինի վայելելու ամենաբարձր բարիքը՝ ազատությունը, «Ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է», իսկ Տիրոջ հոգին ճշմարտության հոգին է:

Ինչպես Քրիստոսի անձնավորության մեջ կրոնն ու բարոյականությունը, մարդասիրությունն ու կարեկցությունը անքակտելի միություն են կազմում, այդպես և քրիստոնեական կրոնի մեջ: Եվ այս իրողությունը բխում է մարդկային հոգվո խորին գիտակցությունից: Կրոնից կտրված բարոյականությունը մի տեսություն է միայն մեր մտքի համար, կյանքի ծառից կտըրված մի ճյուղ, որ ի վերջո չորանալու է դատապարտված: Ոչ նյութապաշտությունը, ոչ նրանից ավելի նուրբ նատուրալիզմը, ոչ մոնիզմը, ոչ օգտավետության վարդապետությունը կամ բանականության վերա հիմնված էթիկան կարող են բարոյական սկզբունքները մեր հոգևոր կյանքի անմիջական, կենդանի տարր դարձնել. նոքա գործ չունին մեր հոգվո զգացմունքների հետ, որոնք բարոյական շարժման հիմքն են կազմում: Բարոյականությունը պետք է լինի ինքնաբուխ, ինչպես վճիտ աղբյուրը: Պետք է մարդկային հոգու մեջ այն վիճակն ստեղծել, որ բարոյական գործն ու միտքը ինքնաբերաբար երևան գան: Այդ վիճակն է կրոնական արտահայտությամբ հավատ առ Աստված, սեր դեպի ընկերը և հույս բարվո, գեղեցիկի և ճշմարտի թագավորության, որոնք մեծ կամ փոքր չափով գոյություն ունին մեր սրտի խորքում:

Մարդկային հոգվո արժանավորությունն ու բարոյական մաքրությունը Եկեղեցվո գոյության նպատակ է. բարոյական մաքրություն ոչ սովորական հասկացողությամբ, այլ ամբողջ ներքին մարդու, մտքի, զգացման, կամքի: Եթե վերարտադրենք մեր հիշողության մեջ հեթանոսական զգայական, եսական և անբարոյական կյանքը քրիստոնեության ծագման օրերին և այդ աղտեղության ծովի մեջ հավատացյալների առաքելության, սիրո և եղբայրության մշտադալար կղզին, այն ժամանակ պարզ կլինի, թե ի՛նչ է քրիստոնեությունը, Եկեղեցին և նորա կոչումը: Նա կյանքի աղն է, որ կամենում է քաղաքակրթություն ազատել ապականությունից, կամենում է մեղմել և ոչնչացնել մարդկային եսականությունը, որ անհատական և հասարակական բնավորություն կրող չարության, անիրավության աղբյուրն է: Այդ հեթանոսությունը կա և այժմ քրիստոնյա ազգերի և պետություններ մեջ և պետք է լինի ապագայում, քանի որ մարդկային հոգու մեջ բարին ու չարը, լավ և վատ հակումները հավասարապես տեղ ունին: Եվ ահա այստեղից բղխում է **Եկեղեցվո կրոնական-բարոյական դաստիարակության սրբազան կոչումը,** ոչ միայն թուլացնել կամ ոչնչացնել մեր վատ հակումները, որոնք մեղքի կամ չարության արմատն են, այլ և զորացնել կրոնական այն զգաց-

մունքը, որ մարդուն դեպի Աստուծո որդեգրության է մղում, **բարոյական եւ մարդասիրական կյանքի մկրտության ավազանը:** Մարդկային հոգին թանկ է ըստ ավետարանական քարոզության եւ Եկեղեցին իբրև իմաստուն վաճառական ծախում է յուր բոլոր ինչքը այդ թանկագին մարգարիտը ձեռք բերելու համար: Նա գործադրում է դաստիարակչական բոլոր միջոցները՝ կենդանի խոսքն ու ավետարանական քարոզը, հովվական և սիրո գործունեությունը, աստվածապաշտությունը, համայնական կազմակերպությունը, գիրն ու գրականությունը, արվեստն ու գիտությունը, դպրոցն ու բարեգործական հաստատությունը, որպես զի իբրև բարի և անձնվեր մշակ ոչ միայն լրիվ պահե յուր Տիրոջ հոտը, այլ և որոնե և գտնե նաև կորուսյալ ոչխարին:

Այս մտքով է նա մաքառել և պիտի մաքառե անհատական և սոցիալական անբարոյականության դեմ, վաշխառության, արբեցության, անառակության, բռնության և աղքատության դեմ: Քրիստոնեությունը տնտեսական վարդապետություն չէ և ոչ քաղաքական սիստեմ, այդ նորա կորուստը կլիներ, եթե կապված լիներ հեղհեղուկ ժամանակի երևույթների հետ, բայց հավատացյալին անհատապես և ամբողջությանն իբրև Եկեղեցի մղել է այնտեղ, ուր տնտեսական վիճակը նյութական և բարոյական թշվառություն է ստեղծել մերձավորի համար: Եկեղեցվո համար նյութական հարստությունն ու բարեկեցությունը վերջնական նպատակ չէ, նորա համար ավելի բարձր բարիք կա քան հացը, հոգևոր-քաղաքակրթական բարիքը, «ոչ միայն հացի կեցցէ մարդ, այլ եւ բանիւն Աստուծոյ», բայց նա աչքից փախցնել չէր կարող, որ աղքատությունը, իրավազուրկ վիճակը փորձություններ է դնում մարդու առաջ, որ հաճախ դեպի կորուստ է տանում: Այսպիսով մենք մոտենում ենք Եկեղեցվո **երկրորդ մեծ կոչման,** որ պատմության մեջ **սիրո գործունեություն** անունն է ստացել, սերտ կապված առաջնի հետ և կարելի է ասել նորա հետևանքը:

Բ

Մենք տեսանք, որ Քրիստոսի անձնավորության, ինչպես և քրիստոնեության մեջ, սերը դեպի մերձավորը անբաժան էր բուն կրոնականից: Կրոնի էությունը սերն էր առ Աստված և առ ընկերը: Ավետարանի մեջ բազմաթիվ ասացվածքներ, մտքեր և առակներ կարող ենք գտնել նույն գաղափարը հաստատող: Քրիստոնյան պետք է անսահման գթության կատարելության դիմե. «Եղերուք գթածք, որպէս եւ երկնաւոր Հայրն ձեր գթած է», պետք է անկարեկից չանցնե օգնության կարոտի մոտով, քաղցածին պիտի կերակրե, մերկին հագցնե, բանտարկյալին մխիթարե... և այդ բոլորը կրոնական սրբազան պարտավորության զգացմունքով, որպես թե Տիրոջն աներ: Քրիստոնեական կրոնի շունչն ու հոգին գթության և եղբայրության այս սերն է, առ Աստված ունեցած որդիական վստահության և անձնվիրության հետ: Եվ Եկեղեցին սիրո այս առաքելությունը կատարեց պատմության մեջ չտեսնված և չլսված անօրինակ եռանդով՝ հենց յուր ծագման առաջին օրերից, հետագա սերունդների համար նմանողության գեղեցիկ օրինակ տալով: Նա հանդես է գալիս որպես հավատարների, եղբայրների մի միություն, շաղկապված գաղափարի և սիրո կապակցությամբ: Եթե Եկեղեցին կրոնական և բարոյական ճշմարտությունների քարոզությամբ

յուր հավատացյալների հայացքը դեպի երկնայինն ու վեմմն էր ուղղում, **գթության և սիրո գաղափարով նա կապում էր շրջապատի և աշխարհի հետ:** Քրիստոնեական կրոնի սոցիալական կողմն էր այս, որ այնքան բարերար արդյունք ունեցավ պատմության ընթացքում:

Եկեղեցվո համար գործունեության հինցը, ուր անհատը դարբնվում էր ապրել ընդհանուրի համար, ինչպես և ամենքը մեկի համար **համայնական կազմակերպություն էր:** Կրոնական ոչ մի սիտեմ, սոցիալական կամ պետական ոչ մի կազմակերպություն այնպիսի համայնականություն չի արտադրել, որպիսին Եկեղեցին յուր գոյության առաջին դարերում: Այստեղ սերը արտահայտվում էր յուր իսկական մաքրությամբ ոչ միայն իբրև անձից անձի ներգործություն, այլ և համայնական ձևով: Համայնական կյանքի կեդրոնն է կազմում աստվածապաշտությունն ու կենդանի քարոզը, որով հավատացյալների ժողովը «դաստիարակության և ազնվության վարժոց» էր դառնում նորա անդամների համար: Սիրո ճաշը յուր շուրջն էր խմբում բոլոր հավատացյալներին անխտիր: Աղքատներն ու աշխատանքի անընդունակները, որբերն ու այրիները համայնքի հովանավորությունն էին վայելում եպիսկոպոսների և նոցա սարկավագների ձեռքով: Ամբողջ համայնքը մի ընտանիք է կազմում, որի հոգևոր հայրը եպիսկոպոսն էր բառի իսկական նշանակությամբ, իսկ մյուսներն էլ քույրեր և եղբայրներ: Աղքատների և կարոտյալների խնամատարության գործը յուր ընտիր կազմակերպությամբ և բարոյական տեսակետներով հասած է եկել քրիստոնեական Եկեղեցվո մեջ: Այստեղ միայն առաջին անգամ կարեկցության և գթության գործը դառնում է համայնական կյանքի մասը: Հատուկ պաշտոնյաներ նվիրված են գթության գործին, նրանք ոչ միայն նյութական օգնություն են հասցնում, այլ և բարոյական դաստիարակություն ներշնչում: Նոքա այցելում են հիվանդներին, բանտարկյալներին, գթության արժանի այրիներին: Եպիսկոպոսի հատուկ հսկողության տակ խնամվում են որբերը, կրթվում և մի արհեստ են սովորում՝ ժամանակին իրենց հացը վաստակելու համար. աղջիկ որբերը չափահաս դառնալուց հետո, եպիսկոպոսի հոգացողությամբ ամուսնանում են քրիստոնյա երիտասարդների հետ: Հեռավոր համայնքներն իսկ օգնում են իրար. Կարթագինեի Կիպրիանոս Եպիսկոպոսը 100,000 սիստերցիուս է ուղարկում Նուբիայի եպիսկոպոսներին գերյալներին փրկելու համար: Հռոմի Դիոնեսիոս եպիսկոպոսը մխիթարության թուղթ և դրամ է ուղարկում նույն նպատակով Կեսարիայի Եկեղեցուն:

Համայնական գթության այս զարմանալի շրջանին հետևում է քրիստոնեական **բարեգործական և կրթական հաստատությունների** ծաղկման շրջանը Գ դարից սկսած: Քրիստոնեության պետական կրոն դառնալուց հետո, երբ տասնյակ հազարներով աճում էին եպիսկոպոսների հոտի թիվը, անկարելի էր այլ ևս անհատական այնպիսի խնամք տանել, ինչպես հնարավոր էր փոքրիկ համայնքների մեջ: Հաստատությունների երևան գալուն շատ նպաստում են և վանքերի սկզբնավորությունն այդ դարում, ուր կեդրոնանում են հաստատությունները: Փոխանակ անհատապես խնամելու ընդարձակ եպիսկոպոսության մեջ ցրված աղքատներին, կարոտյալներին, հիվանդներին, որ անկարելի էր, հանդես են գալիս հաստատություններ, այնտեղ են խմբում նրանց ավելի հեշտ կերպով օգնելու համար: Դորանով ի հարկե անհատական և համայնական խնամատարությունը չի վերջանում, բայց քրիստոնեական գթության գործը կեդրոնանում է հաստատությունների մեջ: Ստեղծվում է որոշ պաշտոնեություն եպիսկոպոսի անմիջական

հսկողության տակ՝ հաստատությունները կառավարելու համար: Հիվանդանոցների համար հատուկ հիվանդապահներ են պատրաստում: Աղքատների խնամատարության գործը դարձյալ եպիսկոպոսների և նրանց սարկավագների ձեռքին էր: Հազարավոր և տասնյակ հազարավոր տառապյալներ, այրիներ, որբեր, հիվանդներ, անդամալույծներ, խեղանդամ և աշխատանքի անընդունակ մարդիկ վայելում են Եկեղեցվո շնորհքը: Դ և Ե դարերը հռոմեական պետության քայքայման շրջանն էր, անընդհատ պատերազմները, բարբարոսների արշավանքները ժողովրդին վերին ծայր աղքատության էին հասցրել: Գերիների թիվը հազարներով էր աճում: Այսպիսի պայմանների մեջ Եկեղեցին յուր եպիսկոպոսներով, յուր պաշտոնեությամբ և հաստատություններով գորովագութ և խնամածու մայր է հանդիսանում աղքատություն ու նորա հետևանքները մեղմելու, գերիներին փրկելու և սգավոր ու վշտաբեկ սրտերն ամոքելու:

Քրիստոնեական հաստատությունների պսակը ասպնջականոցն էր. պանդուխտները, աղքատները, հիվանդները, որբերն ու այրիները և ամեն տեսակի տառապյալներ այնտեղ ոչ միայն օթևան, այլ և սեր ու խնամք էին վայելում: Ասպնջականոցից են ծագում հետզհետե և մյուս հաստատությունները, հյուրանոցները, հիվանդանոցները, այրիանոցները, որբանոցները, ծերունիների և ծննդկանների ապաստանարանները: Որոշ վանքերում խնամք էին վայելում և հոգևոր կրթություն ստանում կույրերը, որոնք հոգևոր երգեր և սաղմոսներ էին սովորում և երգում հավատացյալների և ուխտավորների առաջ: Հոգեկան հիվանդներն ևս ունեին իրենց ապաստանարանները: Նույն իսկ ընկած կանանց համար հաստատություններ կային, ուր նոքա ապաշխարում էին և քրիստոնեական սերը նրանց փրկության համար ևս հոգում էր: Հասարակությունից քշված բորոտներն իրենց ուրկանոցներն ունեին:

Եկեղեցին այսպիսով յուր նյութական և բարոյական ամբողջ կարողությունը նվիրել էր սիրո գործունեության. կտակներից, մասնավոր նվիրատբերություններից, կալվածների եկամուտներից ստացված արդյունքը գործադրվում էր այս և նորա նման նպատակների համար: Եկեղեցին յուր պաշտոնեությամբ բաց ճակատով հոտին ասել կարող էր. «Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»: Եկեղեցվո ականավոր հայրերը հատկապես օրինակ էին հանդիսանում սիրո գործունեության և նվիրաբերության մեջ: Բարսեղ Կեսարացին յուր ամբողջ կարողությունը աղքատներին նվիրեց և հաստատեց Կեսարիայի մոտ յուր նշանավոր ասպնջականոցը. Եփրեմ Ասորին մի հիվանդանոց հիմնեց Եդեսիայում 300 մահճակալներով. Հայաստանում Ներսես մեծ բարեգործական և կրթական հաստատությունների ցանցով պատեց մեր երկիրը: Ոսկեբերան երկու ասպնջականոց հիմնեց Պոլսում և 7700 աղքատ էր խնամում: Հռոմի և ուրիշ եպիսկոպոսների խաղացած դերը բարոսների արշավանքների ժամանակ հոգուտ ժողովրդի, նրանց ցույց տված օգնությունը գերյալներին, հայտնի է ամենքին: Եկեղեցին յուր եպիսկոպոսներով պաշտպան է հանդիսացել թույլերին բռնավորների և կայսրների դեմ, աճապին բարերար ազդեցություն է ունեցել պետական օրենսառաջ առնելու:

Գ

Եկեղեցվո **երրորդ կոչումը կրթական և քաղաքակրթական գործունեություն է:** Այս կոչումն էլ սերտ կապված է նախկին կոչումների հետ: Քրիստոնեական ճշմարտությունները հոտի մեջ հաստատելու համար ի սկզբանե անտի գործադրվում են քաղաքակրթական երկու կարևոր գործոնները՝ գիրն ու կենդանի խոսքը: Առաքյալները ավետարանը բերանացի քարոզելուց հետո՝ հեռավոր քաղաքներից թղթեր էին գրում համայնքների մեջ ապրած տարաձայնությունները փարատելու կամ թյուրիմացությունները պարզելու համար: Ավետարաններ են գրվում Հիսուսի գործի և վարդապետության նկարագրությամբ: Հետ առաքելական շրջանի և եկեղեցական հայրերը, ջատագովները անագին մատենագրություն են ստեղծում եկեղեցական և ավետարանական կյանքի հետ կապված խնդիրների վերաբերությամբ: Եկեղեցվո հոտի համար ամենամեծ դպրոցը, ինչպես տեսանք, համայնքն էր. բայց առաքելական շրջանից արդեն հատուկ պաշտոնյաներ կային, որոնք համայնքին ուսուցանում էին քրիստոնեական կրոնը և վարդապետներ են կոչվում: Իսկ երկրորդ դարու վերջերին հանդես են գալիս նորավարժից կրթարանները կամ դպրոցները:

Քաղաքակրթական միջոցների գործադրություն ու զարգացումը Եկեղեցվո մեջ իրերի ընթացքի հետ կապված բնական երևույթ էր: Քրիստոնեությունն ինքը գրի և բարձր քաղաքակրթական կրոնն էր և կոչում էր ստացել թագավորելու ժամանակի քաղաքակիրթ ազգերի սրտի մեջ: Ուրեմն պիտի կարողանար պարզել յուր ճշմարտությունները նաև փիլիսոփայական կրթություն ստացած հասարակության պատշաճ լեզվով: Այստեղից են հառաջ գալիս եկեղեցական-գիտնական նշանավոր դպրոցները Աղեքսանդրիայում, Անտիոքում, Եդեսիայում և այլ կեդրոններում: Եկեղեցվո գիտնական ներկայացուցիչները յուրացնում են հունական գիտություն ու փիլիսոփայության մեթոդները քրիստոնեական ապովածաբանություն և աշխարհայացք ստեղծելու համար: Նույն իսկ հեթանոս երիտասարդներ ու փիլիսոփաներ լսում էին Օրիգինեսի դասախոսություններն Աղեքսանդրիայում: Երկրորդ դարի վերջերից սկսած **գիտությունը դաշնակից էր քրիստոնեության** հանձին եկեղեցական նշանավոր հայրերի: Գիտության պահանջի հետ հառաջ է գալիս և **եկեղեցական մատենադարանը:** Առաջին քրիստոնեական մատենադարանը, ըստ Եվսեբիոսի եկեղեցական պատմության, Երուսաղեմինն էր՝ Աղեքսանդր եպիսկոպոսի ձեռքով հիմնված Գ. դարու առաջին քառորդում: Երկրորդ և ավելի նշանավորը Կեսարիայինն էր, որից օգտվելով Եվսեբիոսը գրեց յուր Եկեղեցվո նշանավոր պատմությունը: Բոլոր հայտնի եպիսկոպոսություններն էլ հետևում են այս օրինակին: Հռոմի դիվանի սկզբնավորությունը չորրորդ դարն է համարվում:

Եկեղեցին յուրացնելով հունական փիլիսոփայությունն ու գիտությունը, մյուս կողմից ինքը բարբարոս ազգերի համար **նոր քաղաքակրթություն, գիր ու գրականություն է ստեղծում:** Սլավոնական ազգերի, գերմանացիների, անգլիացիների գրականության սկզբնավորությունը կապված է քրիստոնեության քարոզության հետ: Սլավոնական ազգերի, ինչպես և Հայոց, Վրաց գրերի գյուտը կատարվել է Եկեղեցվո պաշտոնյաների ձեռքով: Գերմանական գրականության ամենահին հիշատակարանը Ս. Գրքի թարգմանություն է. նույնն է և Հայոց համար: Եկեղեցին է, որ պատմության ասպարեզի վերա նոր դուրս եկած ազգերի մեջ քրիստոնեության տարածման

հետ՝ հաստատում է հունական քաղաքակրթության և արվեստի մնացորդները թարգմանում է Պղատոնի, Արիստոտելի և նոր պղատոնական այլ և այլ փիլիսոփաների երկերը և ավանդում հետագա սերունդների: Այս քաղաքակրթական գործունեության մեջ շատ մեծ դեր են կատարում վանքերը, դառնալով ժամանակի գիտության, արվեստի և կրթության օրորանները: Եկեղեցվո դաստիարակչական և քաղաքակրթական ներգործության շնորհիվ հետզհետե մեղմանում են բարբարոս ազգերի բարքերը և եվրոպական ներկա քաղաքակրթության հիմքը դրվում: Եկեղեցին յուր վանքերով, հատկապես արևմուտքում, առաջնորդ է եղել նաև աշխատասիրության, նյութական կուլտուրայի և երկրագործության:

Քրիստոնեական եկեղեցվո բարերար ազդեցությունը ոչ պակաս երևվում է **արվեստի զարգացման մեջ:** Ընդհանրապես կրոնը հոգևոր կյանքի, քաղաքակրթության և արվեստի կենսատու երակն է: Հին քաղաքակիրթ ազգերի՝ Բաբելացիների և Եգիպտացիների, հատկապես Հունաց արվեստի պատմությունը շատ անհերքելի և պարզ ապացույցներ է տալիս այս մասին: Հունական արվեստի՝ ճարտարապետության և արձանագործության ամենահրաշալի արտադրությունները կրոնական են — տաճարներ, աստվածների և աստվածուհիների արձաններ: Նույնպիսի սերտ կապ նկատվում է բանաստեղծության, բեմական արվեստի և կրոնի մեջ: Բայց շատ հետու չերթանք. մարդկության ամենամեծ հանճարներից մեկը՝ Գյոթեն, հաստատում է, թե «մարդիկ միայն այնքան ժամանակ ստեղծագործող են բանաստեղծության և արվեստի մեջ, որքան նրանք կրոնական են, հակառակ դեպքում նմանող են կամ հնի կրկնող»:

Կրոններից ազնվագույնն ու բարձրագույնը բացառություն չպետք է կազմեր. և հիրավի, արվեստի, ինչպես և քաղաքակրթության պատմության մեջ քրիստոնեական տարրը ամենախոշոր տեղն է բռնում: Եվրոպական ներկա քաղաքակրթության մասին կարելի է որպես քրիստոնեական քաղաքակրթության մասին խոսել: Եվ այդ հասկանալի է. ներքին և հոգևոր կյանքում քրիստոնեական կրոնի կատարած էական դերը պետք է արտահայտեր և թանձրանար արվեստի և քաղաքակրթության մեջ: Սկզբում քրիստոնեական արվեստը, ինչպես ցույց են տալիս կատակոմբաների հիշատակարանները, կրում են հեթանոսական արվեստի հետքեր, նույնը կարելի է ասել ճարտարապետության և մանրանկարչական արվեստի մասին: Բայց քրիստոնեության հաղթությամբ նորա արվեստն էլ յուր բոլոր ճյուղերով ինքնուրույն բնավորություն է ստանում: Արվեստի թագուհին, ճարտարապետությունը, հրաշալիքներ է ստեղծել. այլ և այլ ոճերով, Հուստինիանոսի Այա-Սոֆիան և Վենետիկի Ս. Մարկոսը, Կեոլնի գոմը և Վիեննայի Ս. Ստեփանոսը, Փարիզի Նոտր Դամը, Հռոմի Պողոս-Պետրոսը, Պետերբուրգի Իսակիևսկի սաբորը, Զվարթնոցը, Երերույքի տաճարը Հայոց մեջ և Անիի Մայր եկեղեցին և այլ քրիստոնյա ազգերի բազմաթիվ տաճարներ, որոնց անունների հիշատակությունը միայն երևներ կարող էր բռնել, հավիտենական կոթողներ են քրիստոնեական Եկեղեցվո բարձր ստեղծագործության: Նույնը կարող ենք ասել նկարչության, երաժշտության և բանաստեղծության մասին: Չհիշելով հին պատկերագրությունը, մոզայիկները Ռավենայում և ուրիշ տեղերում, ինչպես մանրանկարչական արվեստի արդյունքները՝ վերածնության շրջանի դասական նկարչությունը և արձանագործությունը ըստ մեծի մասին կրոնական բովանդակություն ունին և օրինակելի կմնան շատ երկար դարերի համար: Հիշենք միայն մի քանի վար-

պետներ՝ ինչպես Ֆրա Անժելիկո, Լեոնարդո տը Վինչի, Միխել Անժելո, Ռաֆայել, Ռուբենս, Դյուրեր... որոնց անունը անջնջելի կերպով կապված են քրիստոնեական արվեստի պատմության հետ: Մարդկային ներքին աշխարհի արտահայտությունը հոգվո հայելու՝ աչքերի մեջ, մադոնաների բարոյական գեղեցկությունն ու մաքրությունը քրիստոնեության կենդանի ներգործության արդյունքն էր արվեստի վերա: Ներկա երաժշտությունն էլ յուր ծագումով եկեղեցական է, նշանավոր վարպետներից հիշենք Հենդելին յուր «Մեսիաս»-ով, Բախին յուր «Մատթեոս Պասիոն»-ով և «մոտետներ»-ով, Մոցարտին յուր «րեգուեմ»-ով, նույն իսկ Վագներին յուր «Պարսիֆալ»-ով: Իսկ բանաստեղծներից, չհիշելով բուն քրիստոնեականները, ամենամեծ հանճարները իրենց արտի խորքում կրոնական են, ոչ դավանաբանական եկեղեցական նշանակությամբ, այլ ըստ էության, որովհետև բոլոր բարձր ստեղծագործություններն իսկապես մեծ կամ փոքր չափով կրոնական են: Հիշենք միայն Դանտեն յուր Աստվածային Կատակերգությամբ, Լեսսինգը յուր Նաթան իմաստունով, Շիլլերը յուր բովանդակ բարոյական իդեալներով, Գյոթեն յուր «Ֆաուստ»-ով և ընդհանրապես տիեզերքի և հոգվո կապակցության մասին ունեցած հայացքներով:

Դ

Այս թոուցիկ ակնարկների մեջ արտահայտված փաստերով տեսանք, որ Եկեղեցին մարդկային զարգացման ամենախոշոր գործոններից մեկն է, եթե չասենք ամենամեծը: Ընդհանուր Եկեղեցվո հետ նույն գաղափարները ժառանգություն է ստացել և Հայոց Եկեղեցին: Մտքերի կրկնություն կլիներ, եթե վերարտադրեինք և մեր Եկեղեցվո կատարած դերը՝ հատաջադիմության համար էական նշանակություն ունեցող այն երեք խնդիրներում՝ **կրոնական-բարոյական դաստիարակության, սիրո կամ սոցիալական գործունեության և կրթական-քաղաքակրթական զարգացման մեջ:** Հայոց Եկեղեցին պատմական բերմունքով ավելի կենդանի դեր է կատարել և անձնվիրություն ցույց տվել դեպի յուր հոտը: Սորա վերա պիտի ավելցնենք և նորա ազգային բնավորությունն ու նշանակությունը իբրև ընդհանուր հայության գլխավոր կապ և հոգևոր գիտակցության մայր: Գործել Հայոց ազգային դարավոր Եկեղեցվո այս պատմական առաքելության դեմ, նշանակում է սեփական ձեռքերով քանդել յուր տունը: Եկեղեցվո այս արբազան և նվիրական կոչումը պարզեցինք **պատմական լուսով,** թեև թոուցիկ աչսպիսի հոդվածի մեջ, որովհետև ի՛նչը կարող է ավելի ազդու և անաչառ խոսել, քան կրքերից ազատ պատմական փաստն ու իրողությունը: Ոչ մի բան չի կարող այնպիսի ուսուցիչ հանդիսանալ, ինչպես պատմությունը, որ մարդկային կյանքի փորձառություն է: Իսկ ընդհանուր և մասնավորապես Հայոց Եկեղեցվո ամբողջ պատմությունը աղաղակում է, թե բարոյական և քաղաքակրթական մի վսեմ առաքելություն ունի կատարելու մեր Եկեղեցին և այսուհետև: Ամենայն հատաջդիմություն անցյալի հետ կապված մի օղակ է, այս ճշմարտությունը երբեք չպետք է մոռանանք:

Հայոց **վերածննդության խարիսխը** քրիստոնեական ավետարանական վերակենդանություն է, մեր դարավոր և արբազան ժառանգության **բարեփոխություն ու բարեկարգությունը,** որովհետև առանց բարոյական վերածննդության ամենայն մի շարժում հաստատված է ավազի վերա: Որքա՜ն կեղտ,

անմաքրություն կար մեր նոր շարժումների մեջ, որ բարոյական զգացմունքի պակասության արդյունք էր: Մինչև չսովորենք ապրել մեր հայրերի լավագույն զգացումներով, չքանչանանք մեր նախնյաց ազնիվ ստեղծագործություններով, չհասկանանք կանգուն և ավերակ հիշատակարանների անմոռնչ, բայց կենդանի լեզուն, բարոյապես քաղաքակիրթ մի նոր ազգ դառնալ անկարող ենք: Բարոյական կենդանության արմատը մարդկային հոգին է, իսկ այս նախադրյալը տանում է մեզ դեպի բարեհորոգված ազգային Եկեղեցվո գաղափարը:

Ծածկել չենք կարող, մեր Եկեղեցին կարոտ է բարեզարդության և բարեկարգության, նորա պաշտոնեությունը ընդհանուր առմամբ տգետ է և անհամապատասխան յուր բարձր կոչման, հոտը խարխափում է բարոյական խավարի և տգիտության մեջ կամ հակակրոնական ուղղությամբ ընթանում, բայց այդ պակասությունները պետք է խորին անձնվիրության զգացմունքն հառաջ բերեն մեր մեջ, բուժելու նրա վերքերը և ոչ՝ թշնամական զգացմունք: Մեր ձգտումը պիտի լինի նոր շունչ և ոգի տալ այս թանկագին ժառանգության, ընտիր պաշտոնեություն պատրաստել, հոտի մեջ սեր և գիտակցություն զարթեցնել դեպի յուր հոգևոր կյանքի և քաղաքակրթության մայրը, որպես զի սա էլ վերանորոգված և զորացած՝ ավելի արդյունավոր լինի այն սրբազան կոչմամբ, որ ստացել է յուր երկարատև պատմական կյանքով և ավետարանի ներքին ազդեցությամբ:

Այսպիսի իղձերով և ցանկություններով բարի գալուստ ենք մաղթում Հայ ժողովրդի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներին և ցանկանում, որ Մայր տաճարի սրբազան կամարների տակ մոռանան ամենայն մի անձնական և կուսակցական հաշիվ և առաջնորդվին մի միայն այս տառապյալ և բազմաչարչար Եկեղեցվո իսկական շահերով, ընտրելով նորա համար արժանավոր Պետ և Հովիվ, որ առաջնորդե մեզ դեպի լույս և ցանկալի վերածնություն:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

«ԱՐԱՐԱՏ», 1908, հոկտեմբեր

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԳՐՔԵՐ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում ի գործածություն եղող գրքերը, ի տարբերություն պարզ (աշխարհիկ) գրքերի, գործածվելուց առաջ նախ օրհնվում են եպիսկոպոսի կողմից (Կանոն նոր գիրք օրհնելոյ, Մաշտոց, էջ 178, Երուսաղեմ, 1977), քանզի օրհնությունից հետո եկեղեցում գործածվող յուրաքանչյուր գիրք դառնում է «հրաշագործ», «համբուրելի» և «սուրբ»: Ապա այդ սուրբ գրքերի առաջնորդությամբ (ընթերցանություն, երգեցողություն) կատարվում է Եկեղեցու ծեսը, արարողությունը կամ կարգը:

Հայ Եկեղեցում ծեսը ունի հիմնական երեք բաժանում.

ա. ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

բ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

գ. ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Ժամերգությունները մեր Եկեղեցում թվով յոթն են՝ բաժանված աբարողական յոթ մասերի (ժամերի): Իսկ ըստ կանոնակարգի ժամերգությունները թվով ինն են, քանզի «Ճաշու» ժամերգությունը իր հերթին բաժանվում է երեք մասի:

1. Գիշերային ժամերգություն.
2. Առավոտյան ժամերգություն.
3. Արևագալի ժամերգություն.
4. Ճաշու (երրորդ, Վեցերորդ և իններորդ ժամու).
5. Երեկոյան.
6. Խաղաղական.
7. Հանգստյան:

Հայ Եկեղեցու սրբազան Խորհուրդներն են.

1. Մկրտություն.

2. Դրոշմ.
3. Ապաշխարություն.
4. Հաղորդություն.
5. Պսակ ձեռնադրության.
6. Պսակ ամուսնության.
7. Վերջին օծում:

գ— Հոգևոր բարեպաշտական արարողությունների ցանկը ներկայացնում ենք ըստ Երուսաղեմի 1977 թ. հրատարակված «Մաշտոցի»:

1. Կանոն գիշեր ժամու աղօթից.
2. Կանոն խաչալուսյ առնելոյ.
3. Կանոն դժուարածին յղի կնոջ.
4. Կանոն վասն այսահարաց և լուսնոտից.
5. Կանոն Սկիհ և Մաղզմա օրհնելոյ.
6. Կանոն եկեղեցւոյ զգեստ օրհնելոյ.
7. Աղօթք խունկ օրհնելոյ.
8. Կանոն նոր գիրք օրհնելոյ.
9. Կանոն աղ օրհնելոյ.
10. Կանոն մատաղ օրհնելոյ.
11. Կանոն ջրհոր օրհնելոյ.
12. Կանոն զարմոիս օրհնելոյ.
13. Աղօթք վասն երաշտի.
14. Կանոն նորոգ սափրելոյ զհերս պատանւոյն.
15. Կանոն մեծի թաղման.
16. Կանոն մեծի այգուց.
17. Կանոն մեծի եօթն աւուր.
18. Կանոն տղայաթաղ կատարելոյ.
19. Կանոն տղայի այգուց.
20. Կանոն տղայի եօթն աւուր.
21. Կանոն հոգեհանգիստ կատարելոյ.
22. Առաջին Ամբիծք ննջեցելոց.
23. Երկրորդ Ամբիծ ննջեցելոց.
24. Երրորդ Ամբիծ ննջեցելոց.
25. Շարականք հանգստեան.
26. Աւետարանք բժշկութեան.
27. Աղօթք բժշկութեան.
28. Տնօրհնեք ի սուրբ Ծննդեան.
29. Տնօրհնեք ի սուրբ Զատկի:

Վերոհիշյալ արարողությունները (կարգ) կատարելու համար Հայ Եկեղեցու եռամեծ հայրապետներն ու վարդապետները հեղինակել, ապա եկեղեցական սուրբ ժողովները կանոնականացրել ու մեզ են ժառանգություն թողել եկեղեցական մեծ գրականություն, որոնց առաջնորդությամբ և հետևելով մենք նաև այսօր կատարում ենք ժամերգություններ, խորհուրդներ և հոգևոր բարեպաշտական արարողություններ:

Մեր նպատակն է՝ ներկայացնել **յուրաքանչյուր արարողական գիրք, ըստ իր հեղինակի և ժամանակի:**

Հայ Առաքելական Ս. Եկեղեցում արարողության ընթացքում գործածվող կանոնական գրքերը հետևյալներն են.

Ա. ԺԱՄԱԳԻՐՔ.
Բ. ՇԱՐԱԿԱՆ.
Գ. ՃԱՇՈՑ.
Դ. ՅԱՅՍՄԱԽՈՒՐՔ.
Ե. ՏԱՂԱՐԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ.
Զ. ՏՕՆԱՑՈՅՑ.
Է. ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ.
Ը. ՄԱՇՏՈՑ:

Ժամագիրք. Հեղինակներ, կազմողներ

1. **Ս. Սահակ Պարթև և Ս. Մեսրոպ Մաշտոց** (—439).

Տաւերի գյուտից հետո, հարկավ առաջինը լինելով, Ժամագրքի կազմությանը և հեղինակմանը ձեռնամուխ եղաւ հայազգի մեծ սրբերը: Սակայն նրանց աշխատությունները չեն թվարկվել հայոց մատենագրության մեջ, այլ միայն Ը դարի հեղինակ Հովհան Օձնեցին է վկայում և Ս. Սահակին վերագրում «Գիշերային ժամերգության» քարոզներն ու աղոթքները: Իսկ ամենակարևոր վկայությունը Ս. Սահակի և Ս. Մեսրոպի մասին մենք գտնում ենք ժամագրքի վերտառության մեջ. «Ժամագիրք ատենի արարեալ սուրբ եւ Աստուածաշնորհ թարգմանչացն ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՎԲԱՅ եւ երանելի հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յովհաննու Մանդակունւոյ եւ սրբոցն Ներսիսի Շնորհալւոյ» (Վաղարշապատ, 1891 (ՌՅԽ)):

2. Գիւտ կաթողիկոս (461—478).

Գյուտ կաթողիկոսին է վերագրվում «Արեւագալի ժամերգութիւն»-ը և մանավանդ «Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու, ընդ ամենայն տեղիս...» քարոզը:

3. **Հովհաննես կաթողիկոս Մանդակունի** (488—490).

Օձնեցու վկայությամբ Մանդակունի հայրապետին է վերագրվում ա. «Գիշերային ժամերգութիւն»-ը, բ. «Զարթուցեալքս» քարոզը, գ. «Զքէն գոհանամք» աղոթքը, դ. Ճաշու ժամերգության երրորդ, վեցերորդ և իններորդ ժամու աղուհացից հատուկ մեծ քարոզներն ու աղոթքները: Ըստ Օրմանյան սրբազանի, «Ծիսական կարգերու վերջնական ձևը» վերակազմել է Հովհան Մանդակունի կաթողիկոսը (Ազգապատում, էջ 478):

4. **Ս. Ներսես Շնորհալի** (1166—1173).

Հատուկ է Ս. Ներսես Շնորհալու վաստակը Ժամագրքի մեջ. այսպես՝ նրան են վերագրվում.

ա— **Գիշերային ժամերգություն**

1. «Յիշեացուք» երգը, բ— «Աշխարհ ամենայն», գ— «Առաւօտ լուսոյ», դ— «Այսօր անճառ», ե— «Աստուած անեղ», զ— «Նորոգող տիեզերաց» երգերը:

2. **Առաւօտեան ժամերգութիւն.**

«Նորաստեղծեալ» և «Արարչական» երգերը:

3. **Արեւագալի ժամերգութիւն.**

«Յարեւելից», «Ճգնաւորք», «Լոյս», «Ճանապարհ» երգերը:

4. **Ճաշու ժամերգութիւն.**

Երրորդ ժամու՝ «Օրհնեմք զքեզ».
Վեցերորդ ժամու՝ «Խաւարեցաւ».
Իններորդ ժամու՝ «Զարչարակցեալ», «Նահապետին» երգերը:

5. **Խաղաղական ժամերգութիւն.** «Նայեաց սիրով»:
6. Հանգստեան ժամերգութիւն. «Հաւատով խոստովանիմ» աղոթքը:

Այլ հեղինակներ.

1) Ս. Թովմաս առաքյալին է վերագրվում «Սուրբ Աստուած» երգի «Փառաւորեալ» մասը:

2) Ս. Գրիգոր Լուսավորչին է վերագրվում «Աստուած մեծ» քարոզը և «Հաւատամք»-ի «Իսկ մեք փառաւորեացուք» հատվածը:

3) Հովհաննես սրկ. «Յիշեա Տէր» քարոզը:

4) Ս. Գրիգոր Նարեկացու աղոթամատոյանից առնված «Բան ԺԲ, ԽԱ, ՂԳ, Զ» մասը:

5) Ս. Գրիգոր Տաթևացուն է վերագրվում ժամագրքի սկզբում «Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ», «Զղջումն» և «Արձակումն» դավանաբանական բաժինները:

ՇԱՐԱԿԱՆ

Հայ Եկեղեցում գործածվող բոլոր շարականները գրված են ութ ձայների հիման վրա և ունեն հետևյալ անվանումները. «Օրհնութիւն», «Հարց», «Մեծացուսցէ», «Ողորմեա», «Տէր յերկնից», «Ճաշու» և «Համբարձի»: Այս ութ խումբ անվանումից զատ կան նաև ուրիշ անուն շարականներ, որոնք հայտնի են «Զանազանք» կամ «Երգ» անվամբ:

Շարականների բաժանումը ութ (8) ձայների վրա.

	ԱՋ	ԱԿ	ԲՋ	ԲԿ	ԳՋ	ԳԿ	ԴՋ	ԴԿ	գումարը
Օրհնութիւն	9	11	12	11	15	10	15	16	99
Հարց	22	20	20	15/1	27	10	39	34/2	190
Մեծացուսցէ	11	6	3	3	3	4	13	12	55
Ողորմեա	21	19	20	18	30	11	40	32/2	193
Տէր յերկնից	31	25	24	34	42	22	53	44/6	281
Մանկունք	3	7	6/3	7	12	2	13/1	15/14	83
Ճաշու	11	4	6	4	8	3	6	10/1	59
Համբարձի	4	1	5	4	2	2/1	6/1	4/2	32
Զանազանք	—	—	—	—	—	1	2	1	4
Ընդ. գումար	112—	93—	99—	97—	139—	72—	189—	195—	996

Շարականների հեղինակները.

Ըստ «Շարակնոցի», ապա նաև ԺԳ դարի պատմիչ Կիրակոսի, նաև հաստատմամբ Գրիգոր Տաթևացու (ԺԵ դար) շարականների հեղինակներն են ըստ ժամանակագրական կարգի.

Ե դար	Ս. Սահակ	«պատկերք»	29
	Ս. Մաշտոց	—	157
	Հով. Մանդակունի	—	5

Զ դար	Մովսես Քերթող	—	240
	Պետրոս Քերթող	—	94
Է դար	Կոմիտաս կաթողիկոս	—	5
Ը դար	Սահակ Զորափորեցի	—	44
	Հովհաննես Օձնեցի	—	11
	Մովսես Սյունեցի	—	62
	Խոսրովադուխտ Գողթնացի	—	1
	Ստեփանոս Սյունեցի	—	80
Ժ դար	Ստեփանոս եպս. Ասպարացի	—	1
ԺԱ դար	Պետրոս Գետադարձ	—	11/72
	Ստեփանոս վրդ. Սեբաստացի	—	6
	Գրիգոր Մագիստրոս	—	1
ԺԲ դար	Հովհ. Սրկ. վարդապետ	—	1
	Գրիգոր Գ Պահլավունի	—	12
	Բարսեղ Դրազարկցի	—	1
	Սարգիս վրդ. Շնորհալի	—	1
	Ս. Ներսես Շնորհալի	—	137
	Ներսես Լամբրոնացի	—	28
ԺԳ դար	Գրիգոր Սկևռացի	—	1
	Խաչատուր վրդ. Տարոնացի	—	1
	Վարդան վրդ. Արևելցի	—	13
	Հովհ. վրդ. Պլուզ Երզնկացի	—	9
	Հակոբ Ա Կլայեցի	—	7
ԺԴ դար	Կիրակոս Վարդապետ	—	1

«պատկերաց» ընդհանուր գումարը 1036

ՃԱՇՈՑ

Հայ Եկեղեցում գործածվող «Ճաշոցի» առաջին հեղինակն է համարվում Ս. Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տեառնեղբայրը, ապա Ս. Կյուրեղ հայրապետը: Այդ է վկայում «Գիրք Թղթոց»-ի այն վկայությունը, որով Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսը, պատասխանելով Անտիոքի հույն եպիսկոպոսին, գրում է. «...զի մեզ յԵրուսաղեմէ գիտեմք զսկիզբն հաւատոյ, եւ առաքեալքն յԵրուսաղէմ կարգեցին, եւ Յակոբոս Տեառնեղբայրըն յԵրուսաղէմ կարգեաց զընթերցուածն, եւ Կիւրեղ հայրապետն զնոյն դաւանեաց» (Գիրք թղթոց, էջ 325):

Ճաշոցի հայ հեղինակներն են.

ա— Հովհաննես Պլուզ—խրատ «Ոսկեփայի».
բ— Ներսես Լամբրոնացի—աղոթք «Հոգեգալուստ».
գ— Եղիշե վարդապետ—աղոթք «Այլաբերպութիւն».
դ— Ներսես Հայրապետ—աղոթք «Խաղողօրհնեք».
ե— Զաքարիա կաթողիկոս—ներբող խաչի «Խաչվերաց».

Հույն և Ասորի հայրեր

ա— Բարսեղ Կեսարացի
բ— Հովհան Ոսկեբերան,

գ— Կյուրեղ Երուսաղեմացի.
դ— Ս. Եփրեմ (թարգմանությունը՝ Գրիգոր Վկայասերի).
ե— Հակոբ Սրճեցի (Խաչի ճառ. Ավագ ուրբաթ):

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Սրբոց վկայաբանություն. **Յայսմաւուրք** անունը ծագել է ԺԳ դարում՝ սրբոց վկայաբանությանց մեջ պատմվող նյութերի մեջ հաճախ կրկնվող «յայսմ աւուր» բառերի կրկնության պատճառով:

«Յայսմաւուրքը» մեզ հայտնի է նաև ուրիշ անուններով. օրինակ՝ Ատոմադիր, Ճառընտիր, Տօնական, Տօնամակ, Տօնապատճառ, Տօնացոյց, Տօնացուցակ:

Օտար հեղինակներ.

1. Աթանաս, 2. Ամփիլոքիոս, 3. Գրիգոր Նյուսացի, 4. Դիոնիսիոս Արիսպագացի, 5. Մեծն Եվսեբիոս Պատմագիր, 6. Եփրեմ Խուրի, 7. Հիպոլիտոս Բոստրացի, 8. Մարութա եպիսկոպոս, 9. Մեղիտե, 10. Հակոբ Սրճեցի, 11. Հովհան Ոսկեբերան, 12. Պրոկղ:

Հայ հեղինակներ.

Ս. Սահակ և Ս. Մաշտոց, Մովսես Քերթող, Մամբրե Վերծանող, Եղիշե, Աբաս, Գրիգոր Զորափորեցի, Սողոմոն վանահայր Մաքենացվոց, Արտավազդ վանահայր Երաշխավոր վանքի, Հովհաննես բժիշկ, Գրիգոր վարդապետ, Ատոմ եպիսկոպոս, Տաճատ հայրն Վարագա, Սամուել Կամրջաձորեցի, Հովսեփ Կոստանդնուպոլսեցի, Գրիգոր Բ Վկայասեր, Կիրակոս վարդապետ Դրազարկցի, Հովհաննես Սարկավագ վարդապետ, Գրիգոր Գ Պահլավունի, Ս. Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Գրիգոր Սկևռացի, Տեր Իսրայել, Կիրակոս վրդ. Արևելցի, Դավիթ երեց Բալուեցի, Գրիգոր Է Անավարզեցի, Մովսես Երզնկացի, Դավիթ եպս. Զմշկածագի, Գրիգոր Տաթևացի, Դանիել վրդ. Մեծոփեցի, Գրիգոր վրդ. Խլաթեցի:

«Յայսմաւուրք»-ը տպագրվել է երեք անգամ՝ 1706 թ., 1730 թ. և 1834 թ., Կ. Պոլսի մեջ:

ՏԱՂԱՐԱՆ—ԳԱՆՁԱՐԱՆ

Տաղարանը խմբագրվել է երկու անգամ: Առաջինի հեղինակը և ժամանակը հայտնի չէ, իսկ երկրորդ անգամ այն խմբագրել և կազմել է Խլաթեցի Գրիգոր Ծերենց վարդապետը 1425 թվականին:

Տաղասացներ.

Ժ դար **Ս. Գրիգոր Նարեկացի**
«Աւետիս մեծ».
«Սեաւ եմ գեղեցիկ».
«Հաւուն հաւուն».
«Ես ձայն զառիծուն»:
ԺԲ դար **Գրիգոր Գ. Պահլավունի**
«Ծաղիկ պայծառ».
«Կայր կոյսն ի յայրին».

«Ով զարմանալի».
«Ի յելս արեւու»:

Ս. Ներսես Շնորհալի

«Նորին Ադամ».
«Կանայքն արտասուոք».
«Նոր ծաղիկ պայծառ».
«Նստեալ կանայքն».
«Այսօր Գաբրիել».
«Անեղ Որդին».
«Անմարմնոցն հրեղինաց».
«Նոր լոյս յարփենւոյն».
«Առաւօտ լուսոյ».
«Երջանիկ հոգիահիրաշ կոյսն».
«Նորահիրաշ տեսիլ»:

ԺԳ դար Մխիթար Այրիվանեցի, Հովհաննես Երզնկացի Պլուզ:

ԺԴ դար Կոստանդին եպս. Կիլիկեցի, Հակոբ, Հովհաննես:

ԺԵ դար Առաքել վրդ. Բաղիշեցի, Առաքել եպս. Սյունեցի, Գրիգոր Սեբաստացի Արթոն:

ԺԶ դար Գրիգորիս Կաթողիկոս Աղթամարցի:

ԺԷ դար Արիստակես Խարբերդցի:

ԺԸ դար Գալուստ պատրիարք Կայծակն:

ԳԱՆՁԵՐ

Գանձեր կամ եղանելապոր բարոգներ. առաջացել է քարոզների առաջ երբեմն «գանձ» բառից. օրինակ՝ Գրիգոր Նարեկացի «Գանձ լուսոյ», «Գանձ բաղձալի», «Գանձ անքննին»: Գանձարանի խմբագիրը ևս հանարվում է Ներսես:

ԳԱՆՁԱՍԱՑՆԵՐ

Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսես Շնորհալի, Խաչատուր Տարոնացի, Հովհաննես Երզնկացի Պլուզ, Մխիթար Այրիվանեցի, Գեորգ Լամբրոնացի, Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Թլկուրանցի, Վարդան, Հակոբ, Մովսես Երզնկացի, Սարգիս, Գրիգոր, Համազասպ, Պողոս, Ստեփանոս, Մկրտիչ, Մատթեոս Ջուղայեցի, Մանուել եպս. Բջնո, Գրիգոր Խլաթեցի Ծերենց, Մկրտիչ եպս. Նաղաշ. Առաքել վրդ. Բաղիշեցի, Հովհաննես Թլկուրանցի, Երեմիա Չելեպի Քյոմյուրճյան:

ՏՕՆԱՑՈՑՑ

«Տօնացուցց»-ի հեղինակների և գործածման նպատակի մասին տեղեկություն ենք քաղում տոնացուցի վերնադրությունից. «Սկզբնաւորեալ ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ... Եւ կարգաւորեալ սրբոյն Սահակայ Պարթեւի եւ երանելոյ հայրապետացն մերոց Գիւտոյ Հայրապետին եւ Յովհաննու Մաս-

դալիուցոյ եւ հուսկ ապա Ս. Ներսեսի Շնորհալւոյ, իսկ յետ ժամանակաց ի Ս. Աթոռն Էջմիածնի Տ. Սիմէոնի հայոց կաթողիկոսի» (Տօնացոյց, Երուսաղէմ, 1915 թ.):

Տոնացոյցի հեղինակները.

1) **Ս. Գրիգոր Լուսավորիչ.**

Ստեսծելով պետական պաշտոնական անկախ Եկեղեցի, բնական է, որ Լուսավորիչը պիտի ստեղծեր անկախ հայկական տոնակարգ: Բայց մեզ գրավոր տեղեկություններ չեն հասել, թե հատկապես ինչ ճորտարարություններ է կատարել և ինչ տեսք է ունեցել Լուսավորչի Տոնացոյցը:

2) **Ս. Սահակ Պարթև, Գյուտ Կաթողիկոս, նաև Հովհան Մանդակունի** հայրապետների անունները ևս վկայագրված են Տոնացոյցում, այս պարագայում ևս ոչ մի գրավոր վկայություն չունենք վերոհիշյալ հայրապետների տոնացուցային կարգադրությունների կամ բարեփոխումների մասին:

3) **Ս. Հովհան Օձնեցի.**

Ըստ Վարդան վարդապետի վկայության, Օձնեցի կաթողիկոսն է կարգավորել Ս. Ծննդյան տոնին իրեն նախատոնակ չորս «Աւագ տօներ»-ը, «Նախատօնակ Տեառն Ծննդեան դնելով զչորս տօնն փոխանակ չորեքկարպեան Աթոռոյն, եօթն հովիւս կազմելով, ութերորդ վաղուց արդեան առաջնորդին՝ Յիսուսին Աստուծոյ» («Արարատ», 1888 թ., էջ 589):

4) **Ս. Ներսես Շնորհալի**

Ըստ «Տօնացոյց»-ի, Շնորհալին կարգավորել է «Հոգեգալստեան» յոթ, իսկ «Վերափոխման» տոնին ինն օր տոնախմբելու մասին. «Յայս վեց վեց աւուրս՝ սրբոյն Ներսէս Շնորհալին կարգեաց տօնել զտօն Հոգւոյն Սրբոյ Գալստեան եւ զարդարեաց երգովքն եւ ընթերցուածովք»: (Տօնացոյց, էջ 147): Այսպիսով այդ վեց օրերը Հոգեգալստյան տոնի հետ կազմում են յոթ օրերի ընթացք: «Եւ այսպէս երիցս անգամ կրկնեա զերիս պատկերս՝ որ լինի ինն օր՝ ըստ սահմանադրութեան սրբոյն Ներսեսի Կլայեցւոյ» (ս.օՀաց. էջ 206):

5) **Սիմէոն Ա. Երեւանցի** (1763—1780).

Սիմեոն կաթողիկոսը բարեփոխեց, տոմարական նոր հաշվարկով տեղաբաշխեց Հայ Եկեղեցու բոլոր տոնելի տոները՝ հատկապես մեծ տեղ տալով **ազգային սրբերին և տոներին.** կազմեց հատկապես շաբաթ և կիրակի օրերի համար տոնական հաստատուն կարգ: Սիմեոն կաթողիկոսի կազմած «Տօնացոյց»-ով ենք առաջնորդվում նաև այսօր:

Հայ Եկեղեցու տարին, ըստ վերոհիշյալ Տոնացոյցի, բաժանվում է երեք հիմնական տեսակ-օրերի: Տէրունի, Սրբոց, Ապաշխարության: Սրանք ևս իրենց հերթին բաժանվում են երեք տեսակի (ըստ կենցաղի կամ կերակրատեսակների տարբերության): **Ուտիք, Նավակատիք և Պահք:**

Ստորև տանք Ուտիքի, Նավակատիքի և Պահոց օրերի ցանկը:

	ուտիք	նավակատիք	պահք	օրերի գումար
Տէրունի օրեր	104	5	27	163
Սրբոց օրեր	101	—	15	116
Ապաշխարության	—	—	113	113
	205	5	155	365 օր

Այս տոնակարգը կատարվում է նաև այսօր նույնությամբ:

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՒՅՑ

Ս. Պատարագի խորհուրդը հաստատել է Քրիստոս «Վերջին ընթրիքի» ժամանակ Սիոնի Վերնատան մեջ: «Առէք, կերայք, այս է մարմին իմ...»: «Արբէք ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի...» (Մատթ. ԻԶ 26—28, Մարկոս ԻԴ 22—24, Ղուկաս ԻԲ 19—20, Ա Կորնթ. ԺԱ 23—25):

Քրիստոսի Համբարձումից հետո առաքյալները Ս. Պատարագի խորհուրդը կատարում էին կիրակի օրերին, որոշ տների մեջ երեկոյան ժամերին (Գործք. Ի 7, Բ 46, Ի 7—11): Առաքյալներն ընթերցում էին Հին Կտակարանից հատվածներ, քարոզում, սաղմոսում, աղոթում, բեկում հացը և բաշխում «Սուրբ Հաղորդությունը», ապա կատարում սիրո ճաշ, որն հայտնի է «Ագապ» անունով:

Առաքելական պատարագամատույցներ.

Մեզ հայտնի են երեք առաքելական պատարագամատույցներ. Ս. Անդրեի, Ս. Հակոբոս Զեբեթյան և Ս. Հակոբոս Տեառնեղբոր: Իսկ հայոց մոտ ընդունված և այսօր էլ կիրառելի պատարագամատույցը կազմող հեղինակներն են՝ ա.—Բարսեղյան (Բարսեղ Կեսարացի). այս պատարագամատույցը անվանվում է Լուսավորչի, հավանաբար Գր. Լուսավորիչը այն կիրառել է մեր եկեղեցիներում: բ.— Նազիանզյան (Գրիգոր Նազիանզացի). Ս. Հովհան Մանդակունի կաթողիկոսը այն որդեգրել և խմբագրությամբ գործածվել է մեր եկեղեցում: գ.— Ոսկեբերանի. նույնություններ ունի Բարսեղյանի հետ և գործածվում է հատկապես Հույների մոտ: Գործածվել է նաև մեզանում: դ.— Հռովմեացվոց. թարգմանված Ներսես Լամբրոնացու կողմից և ապա որդեգրված ու որոշ մասեր ներմուծված մեր խորհրդատետրում:

Արդի պատարագամատույցը կազմվել է առավելապես Կապադովկյան հայրերի՝ Ս. Բարսեղի, Ս. Նազիանզացու պատարագների հետևությամբ: Խմբագրվել է Լամբրոնացու կողմից, ավելացվել Նարեկացու աղոթքները, իսկ ավելի ուշ, «Տէր ողորմեա»-ի երգերը Ս. Երևանցու ժամանակ: Հրատարակվել է շատ անգամներ: 1513 թ.՝ Վենետիկ, 1748 թ.՝ Պոլիս, 1880 թ.՝ Վաղարշապատ, և այլն:

ՄԱԾՏՈՑ (ՄԱՅՐ ՄԱԾՏՈՑ)

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու խորհուրդներն ու հոգևոր բարեպաշտական արարողությունները պարունակող գիրքը կոչվում է «Ծիսարան» կամ «Մաշտոց»:

Ըստ Կ. Պոլսում 1807 թ. (էջ 3) Մայր Մաշտոցի բացատրության, ծիսարանը Մաշտոց է կոչվում Ս. Մեսրոպ Մաշտոցի անունով: Նրան է վերագրվում ծիսարանի կազմությունը: Իսկ Կիրակոս Պատմիչը այն վերագրում է Մաշտոց կաթողիկոսին (897—98 թ.) այս վկայագրով. «Սա կարգեաց զգիրսն որ ըստ իր անուան Մաշտոց կոչի, ժողովեալ զամենայն

կարգս...»: Օրմանյան և Դուրյան արբազանները ևս հաստատում են վերջին կարծիքը (Ազգապատում, 698 էջ):

Ծիսարան Մաշտոցի հեղինակները.

ա— **Հուստոս եպիսկոպոս.** «Իսկ վասն Տեառնականի եւ Աղօրհնեիցն սրբոյն Յուստոսի է արարեալ, որ էր չորրորդ եպիսկոպոս Երուսաղեմի ի սրբոյն Յակոբայ» (Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 247):

բ— **Ս. Գրիգոր Լուսավորիչ.** «Իսկ վասն գրակարդացաց եւ կիսասարկաւագաց եւ ընկարեալ եկեղեցւոյ, եւ յետոյ դուռն եկեղեցւոյ, եւ զնշարս սրբոցն ի հանգիստ փոխել, այս ամենայն հիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ» (Մատենադարան Հայկ. Թարգ., էջ 247):

գ— **Եփրեմ Խուրի.** «Իսկ զԱգապան սուրբ առնել, որ է հոգեհանգիստն, եւ զՔահանայապաղն՝ որ ունի ութեւտասան աւետարան արարեալ է սրբոյն Եփրեմի Խուրին Ասորւոյ ի Նիկոմիդացւոց քաղաքին երկրորդ ամի հայրապետութեան իւրոյ...» (Մատենադարան հայկ. թարգ., էջ 247):

դ— **Գրիգոր Աստվածաբան.** «Զկանոն սերմնօրհնէքին, զկալի եւ զհընձանի՝ արարեալ Գրիգորի Աստուածաբանի...» (Մ. Մաշտոց, Կ. Պոլիս, 1807 թ., էջ 2):

ե— **Ս. Սահակ Պարթև.** «Իսկ զՔահանայօրհնէսն սրբոյն Սահակայ է գործել... եւ ի քահանայապաղն այլ՝ յաւել եօթն աւետարան... նոյնպէս եւ զԱշխարհապաղն ի քաղաքադաշտի...» (Մատ., էջ 247):

զ— **Հովհան Մանդակունի.** «Յետ այսորիկ գրի անդ թէ՝ զհիմնարկէք եւ զեկեղեցւոյ օրհնէքն, զսրբել տաճարի եւ ժամահարի, սկհի եւ Մաղզմայի եւ հանդերձ սպասու, աւազան եւ մկրտութիւն առնել, խաչ օրհնել եւ պսակ դնել.. զայդ Մանդակունին է արարեալ, որ չորեքտասան թիւ էր ի սրբոյն Գրիգորէ» (Մայր Մաշտոց, էջ 8):

է— **Մաշտոց կաթողիկոս.** 1696 թ. Էջմիածնում գրված «Յայսմաւուրք»-ի վկայությամբ (Երուսաղեմ ձեռագրատուն, թիվ 1918, էջ 235). «Այս վարդապետս Մաշտոց, ընդ բարի վաղուց առաքինութեան իւրոյ, արար և բազում ուղղութիւն կարգաց եւ կրօնից սբ. եկեղեցւոյ: Եւ ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն, եւ զթերին ինքն ելից յաստուածային շնորհաց իւրոց, եւ եդ ի միում տփի զկարգն Մկրտութեան և զՊասկին, զՀաղորդութեան, զթաղման, զհոգեհանգիստն, եւ զխաչօրհնէքն, զսերմօրհնէքն, զՇեղջ, զկալ, եւ զհնձան, զհորս, եւ զկարաս, զՋրօրհնէն եւ զՈտնլուայն, զհիմնարկէքն եւ զԵկեղեցի օրհնէքն, զԱւազան եւ զպղծեալ Տաճարին, զՁեռնադրութիւն, եւ զՔահանայապաղն, եւ զայլ ամենայն սրովք վարին մերս կարգաւորութիւն, վասն որոյ եւ անուն գրոցն Մաշտոց կոչեցաւ, զի նորին աշխատասեր կամօքն ի մի վայր ժողովեցաւ»:

ը— **Ս. Ներսես Շնորհալի.** Մեռոնօրհնության կանոնի մեջ Ներսես Շնորհալուն է վերագրվում մի քարոզ. «Նոր աւրհնութիւն ընդ հայցուածոց մաղթանաց...» (Յուցակ հայերեն ձեռագրաց, Բ հատոր, Հալեպ, 1936 թ., էջ 15):

թ— **Ներսես Լամբրոնացի.** Թարգմանաբար հաստատել է «Թագաւորօրհնէք»-ի կարգը, ինչպես Լամբրոնացին է վկայում. «Իսկ ես զսահմանեալ աւրհնութիւն թագաւորիս ոչ կամեցայ աղաւաղել, եդի ընդ նախ թարգմանեալ կարգաւ վերստին յարմարմամբ...»: Նրա գրչին է պատկանում նաև «Ջրօրհնէք»-ի կանոնը:

ժ— **Ստեփաննոս արքեպս. Տարոնցի.** Հորինել է «Նաւօրհնեաց կանոնը» (տես «Միսուաճ», էջ 74):

ժա— **Գրիգոր Տաթևացի.** Հեղինակել և սահմանել է Վարդապետական աստիճանի տվչության հատուկ կարգը (Մ. Մաշտոց, էջ 281):

Վերոհիշյալ կարգը Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով 1876 թ. Վաղարշապատում հրատարակված Մաշտոցում վերնագրվել է հետևյալ կերպ. «Գիրք գաւազան տալոյ աշակերտացն ճշմարիտ բանին քարոզութեան, նախ զմասնաւորն իշխանութիւն՝ որ է չորս աստիճան, եւ ապա զծայրագոյն, որ է տասն աստիճան, որ լինի բոլորն չորեքտասան: Յօրինեալ սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ ճշմարտութեան վարդապետի, գերահռչակաւոր հռետորի եւ անյաղթ ախոյանի սուրբ հաւատոյ, աշակերտի մեծի Յովհաննու Որոտնեցւոյ»:

ժբ— **Միհաս արքեպիսկոպոս.** Սուրբ Էջմիածնի միաբան Միհաս արքեպիսկոպոսը կարգավորել է «Եկեղեցւոյ հիմնարկութեան» կանոնը: «Կանոն եւ արարողութիւն վասն հիմնարկութեան եկեղեցւոյ: Արարեալ Տեառն Յովհաննու Մանդակունւոյ՝ արբազան կաթողիկոսի նախատես: Եւ կարգաւորեալ այժմ ի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի միաբան՝ Տեառն Միհասայ Արհիեպիսկոպոսէ» (Մ. Մաշտոց, էջ 155):

ԱՐՏԱԿ ԱՎ. ՔՀՆ. ՍԻՄՈՆՅԱՆ

„ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫИ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 1994г.)

1. **Редакционная** (стр. 3—4).

2. Проповедь Католикоса всех армян Вазгена I в Кафедральном соборе Св. Эчмиадзина по случаю Светлого Рождества Христова, 6 января 1994 г. (стр. 5—7).

3. Слово благословения Католикоса всех армян Вазгена I по телевидении Армении по случаю Нового Года, 31 декабря 1993 г. (стр. 8—9).

4. Приветственные телеграммы и послания между Католикосом всех армян Вазгеном I и духовными предстоятелями церквей-сестер по поводу Светлого Рождества Христова и Нового Года (стр. 10—12).

5. Новогоднее и рождественское послание Католикоса всех армян Вазгена I, направленное трём преосвященным престолам Армянской Церкви, всем епархиальным предстоятелям и церковным общинам (стр. 13—14).

6. Обмен телеграммами между Католикосом всех армян Вазгеном I и государственными высокопоставленными лицами по случаю празднеств Светлого Рождества Христова и Нового Года (стр. 15—16).

7. Слово Католикоса всех армян Вазгена I, направленное руководителям Республики Армения и аккредитированным послам в Армении, 6 января 1994 г. (стр 17).

8. Новогодние торжества в первопрестольном Эчмиадзине, 31 декабря 1993 г. Помещены также слово благословения Католикоса всех армян Вазгена I, вступительное ректора Духовной Академии Св. Эчмиадзина епископа Анания Арабаджяна, поздравителное воспитанника VI курса диакона Вазгена Галстяна (стр. 18—24).

9. **Мариам Вартанян**—Рождественские торжества в воскресных школах. Помещены также слово благословения Католикоса всех армян Вазгена I, первооценочное иеромонаха Вазгена Мирзаханяна и слово благодарности и заслуги учительницы Сусанны Хачатурян (стр. 25—32).

10. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за январь месяц (стр. 33—34).

11. **Архиепископ Шаге Аджемян**—Пережитие отрывки одного из раннего армянского перевода Библии (исследование)—(стр. 35—42).

12. **Архимандрит Микаэл Ачапагян**—«Пусть Всевышний озарить наши сердца» (проповедь)—(стр. 43—46).

13. Разделы из Священного Писания (псалом 4, 5, 6)—(стр. 47—49).

14. **Архимандрит Гарегин Овсепян**—Предназначение церкви (перепечатка)—(стр. 50—58).

15. **Протоиерей Артак Симонян**—Используемые пособия время обрядов Армянской Апостольской Церкви (исследование)—(стр. 59—69).

„ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1994)

1. Editorial (pp. 3—4).

2. Patriarchal sermon on the occasion of the wonderful Holy Christmas feast of Saviour, given in the Cathedral of St. Etchmiadzin, 6-th January 1994 (pp. 5—7).

3. The address of blessing of His Holiness on the occasion of the New Year, given by the TV of Armenia, 31-st December 1993 (pp. 8—9).

4. Congratulatory cables and letters exchanged, between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the sister Churches, on the occasion of the New year and Holy Christmas (pp. 10—12).

5. The congratulatory, letter of His Holiness written to the three hierarchical Sees of the Armenian Church, all diocesan prelataes and church communities, on the occasion of the feast of New Year and Holy Christmas (pp. 13—14).

6. Cables exchanged between His Holiness Vasken I Catholicos of All Armenians and the State high rank personalities on the occasion of New Year and Holy Christmas (pp. 15—16).

7. The address of His Holiness given to the leaders of the Armenian Republic and to the ambassadors accredited in Armenia, 6-th January 1994 (p. 17).

8. The New Year in the Holy See, 31-st December 1993. There are also the opening word of Bishop Ananya Arabadjian, vice rector of the Spiritual Seminary, of
ing word of Bishop Ananya Arabadjian, vice rector of the Spiritual Se of deacon Vasken Galesdian, student of 6-th class of the Seminary, and the blessing address of His Holiness (pp. 18—24).

9. **Maryam Vardanian**—The feasts of Holy Christmas in the Sunday school. There are also the word of estimation of Father Vasken Mirzakhanian, the address of gratitude of school mistress Soosanna Khatchaderian and the blessing word of His Holiness (pp. 25—32).

10. Divine liturgy of services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of January 1994 (pp. 33—34).

11. **Archbishop Shahé Adjemian**—Survived sections from an old Armenian translation of the Bible (study)—(pp. 35—42).

12. **Father Mikayel Atchabahian**—«Let God rises light in our hearts» (sermon)—(pp. 43—46).

13. Sections from the Bible (Psalms IV, V, VI)—(pp. 47—49).

14. **Father Garegin Hovsepian**—The appeal of Church (reprinting)—(pp. 50—58).

15. **Archpriest Ardag Simonian**—Books which are used in the ceremonies of the Holy ApostolicArmenian Church (study)—(pp. 59—69).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1994)

1. Editorial (pp. 3—4).

2. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1994 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la Sainte Nativité (pp. 5—7).

3. Message de Sa Sainteté prononcé le 31 décembre 1993 à la télévision d'Erévan à l'occasion du Nouvel An (pp. 8—9).

4. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pp. 10—12).

5. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pp. 13—14).

6. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat à l'occasion de Noël et du Nouvel An (pp. 15—16).

7. Allocution de Sa Sainteté adressée aux dirigeants du gouvernement de la République d'Arménie et aux ambassadeurs des pays étrangers en Arménie (6 janvier 1994)—(pp. 17).

8. Festivités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées à la fête du Nouvel An. Textes du discours d'ouverture de l'évêque Anania Arabadjian, recteur du séminaire de St. Etchmiadzine, du discours de félicitation du diacre Vasken Galstian, étudiant du séminaire, et du message de bénédiction de Sa Sainteté prononcés à cette occasion (pp. 18—24).

9. **Mariam Vartanian**—Description des festivités qui ont eu lieu dans des écoles de dimanche à l'occasion de la fête de la Sainte Nativité. Textes du discours du Père Vasken Mirzakhanian, du discours de remerciements de Soussanna Khatchatrian et du message de bénédiction de Sa Sainteté prononcés à cette occasion (pp. 25—32).

10. Brèves information concernant la célébration des saintes messes, des sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1994 (pp. 33—34).

11. **Archevêque Chahé Adjémian**—Quelques fragments découverts d'une ancienne traduction arménienne de la Bible (étude)—(pp. 35—42).

12. **Père Mikaël Adjabahian**—«Puisse Dieu répandre sa lumière dans nos coeurs» (sermon)—(pp. 43—46).

13. Extraits de la Sainte Bible (Psaumes IV, V, VI)—(pp. 47—49).

14. **Père Garéguine Hovsepian**—La vocation de l'Eglise (reproduction)—(pp. 50—58).

15. **Archiprêtre Artak Simonian**—Des livres qui sont en usage dans l'Eglise apostolique arménienne pendant la célébration des offices (étude)—(pp. 59—69).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ 3

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդեան տօնի առթիւ Մայր տաճարում 5

Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը Նոր տարվա առթիվ Հայաստանի հեռուստատեսությամբ 8

Ամաւորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 10

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամաւորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու ընդհրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 13

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Ամաւորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ 15

Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության ղեկավարներին և Հայաստանում հավատարմագրված դեսպաններին . . . 17

Ամաւորը Մայր Աթոռում 18

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ—Սուրբ Ծննդյան հանդիսություններ կիրակնօրյա վարժարաններում 25

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 33

ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ—Աստուածաշունչի հայերէն հին թարգմանութենէ մը վերապրած հատուածներ 35

ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ—«Ատված մեր արտերում թող լույս ծագեցնի» . 43

Աստվածաշունչ Մատյանից 47

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ—Եկեղեցվո կոչումը 50

ԱՐՏԱԿ ԱՎ. ՔՀՆ. ՍԻՄՈՆՅԱՆ—Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում արարողության ընթացքում գործածվող գրքեր 59

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 70

«Etchmiadzin» official monthly of Holy Etshmiadzin 71

«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 72

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 11.02.1994 թ.: Ստորագրված է տպագրության 10.03.1994 թ.:
Տպագրական 4,6 մամուլ + 3 ներդիր, թուղթ 70×108¹/₁₆, պատվեր 124:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան